

Մ. ՄԱՆՎԵԼՅԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ
ՊԱՏՄԱԾՔՆԵՐ



891.995

5-98

6251-60
66-69



891.99 Ծ

2011-07

Մ-28

ՄԻՔԱՅԵԼ ՄԱՆՎԵԼՅԱՆ


Խ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Նկարներ
Վ. ԿԱՐԱԳԵՏՅԱՆԻ

103
Ծ

ՊԵՏՏՐԱՏ
ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939



— Ա՛յ դու անպիտան, ինչո՞ւ յես կծում Լուսիկի տիկնիկի փորը:

Շունը կարծես հասկանալով՝ ցած եր թռչում թախտի վրայից, մի քանի պառլայաներ անում, ցած գցում տիկնիկին, ու մի քիչ անց, մի ուրիշ խաղալիք առնում ու ելի փախչո՞ւմ...

Լուսիկը շատ դոհ եր շնիկից, շնիկն ել Լուսիկից:

Հանգստյան ուր եր: Հայրիկն ել տանն եր, սեղանի մոտ նստած թեյ եր խմում ու լրագիր կարդում, յերբ մայրիկը վախեցած դեմքով ներս յեկավ և անհանդիսս ձայնով ինչ վոր ասաց Լուսիկի հորը, նա յել թողեց թեյը, լրագրի ընթերցումն ու արագ անցավ ննջարան, ուր պառկած եր Լուսիկը:

Շունն ել՝ լուռ գնաց նրանց յետևից:

Լուսիկը պառկած եր. հայրը ձեռքը դրեց նրա ձախատին, բռնեց բազկերակը:

— Տաքություն ունի:

Լուսիկն ուզեց վեր կենալ, չթողին:

— Վո՞րակող է ցավում:

— Վոչ մի տեղս ել չի ցավում:

Յերեկոյան մի մարդ յեկավ, գնաց Լուսիկի մոտ, նայեց կոկորդը, թխթխկացրեց կուրծքն ու մեջքը:

Շունը շատ եր ուզում հաջել այդ անծանոթ մարդու վրա, բայց վախեցավ Լուսիկին անհանգստացնի. մեկ ել վոր այդ մարդուն տեսել եր ելի մի անգամ իրենց տանը, յերբ Լուսիկը պառկած եր, և մի քանի ուր շնիկը գրկվել եր խաղընկերից ու տխրել:

Հետևյալ ուրն այն մարդը կրկին յեկավ, Լուսիկը դեռ պառկած եր: Նրա գնալուց հետո Լուսիկի հայրիկն ու մայրիկը ավելի տխրեցին, շշուկով եյին խոսում իրար հետ: Հայրիկն աշխատանքի չգնաց:

Շնիկն ել շատ տխուր եր, իր սիրուն կլոր աչքերով նայում եր նրանց և կարծես ուզում եր հասկանալ նրանց տխրության պատճառը: Ճաշից հետո՝ մի ավտո մոտեցավ նրանց տանը, մի կին, վորին շնիկը յերբեք չեր տեսել, վեր յելավ, խոսեցին, բայց շնիկը վոչինչ չհասկացավ: Լուսիկին հագցրին, փաթաթեցին, դրին ավտոյի մեջ ու տարան: Շունը փողոցի դռանն եր, յերբ ավտոն շարժվեց: Նա մի քանի վայրկյան լուռ նայեց ու գլխապատառ սլացավ ավտոյի յետևից:

Որերն անցնում եյին, բայց Լուսիկը չեր վերադառնում, մայրիկն ել չկար, հայրիկն ել միշտ լուռ եր ու տխուր, շնիկի ախորժակն ել փակվեց: Գլուխը դրած,

Լուսիկի տիկնիկի մահճակալին, տխուր աչքերով նայում եր այնտեղ քնած տիկնիկին:

Մեկ-մեկ տնից նա դուրս եր դալիս բակը, քիչ դես ու դեն ընկնում ու հարմար առիթից ոգտվելով՝ գնում եր դեպի այն շենքը, ուր տարան Լուսիկին Պըտույտ եր գալիս շենքի շուրջը. մի քանի անգամ փորձեց ներս մտնել, թույլ չտվին և նա տխուր վերադարձավ տուն ու գնաց պառկելու Լուսիկի խաղալիքների մոտ:

Արդեն յերկու շաբաթ եր անցել, ամեն ոք չունր գնում եր: Մի անգամ նա պատուհանի մոտ տեսավ Լուսիկի մայրիկին: Ուրախությունից թռչկոտեց, հաջեց ու լսելով իր անունը, սկսեց յես ու առաջ վազվզել, աչքերը շարունակ դեպի լուսամուտը:

— Դեզի'կ:

Ապակիների միջից հասավ նրա ականջին այն հարազատ ձայնը, ցնցվեց, կանգ առավ մի քանի վայրկյան, կարծես աչքերին չհավատալով, վոր մոր գրկում խկապես Լուսիկն եր. ու ճանաչելով՝ խելագարի պես նետվեց դեպի պատուհանը: Չանկրտելով պատը՝ ուզեց վեր մագլցել, վայր ընկավ, նորից փորձեց, կրկին ընկավ: Չգալով վոր անհույս է՝ նստեց յետին վոտների վրա, աչքերը հառեց պատուհանին ու ամբողջ մարմնով հանկարծ դողալով՝ սկսեց վնդստալ, կարծես խնդրում եր, վոր ներս թողնեն:

— Դեզիկ, Դեզիկ, տուն գնա, յես շուտով կրգամ... շուտով:

Յեվ նրանք հեռացան պատուհանից:

Շնիկն սպասեց, սպասեց, բայց նրանք այլևս չերեվացին, մութն ընկնելու վրա յեր, վեր կացավ ու գնաց:

Հետևյալ օրը, նրա ձայնի վրա, Լուսիկի մայրը մոտեցավ պատուհանին:

Փողոցում, պատուհանի դիմաց, կանգնած եր շենիկը ատամներով սղմած Լուսիկի սիրելի տիկնիկը:

Լուսիկի մայրը փողոց վազեց, շոյեց շնիկի գլուխը, փաղաքչական խոսքեր ասաց, շնիկն ել լիզեց նրա ձեռները:

— Դեզի'կ, Դեզի'կ, լա'վ շնիկ, դե, գնա', տուն, գնա', մենք ել շուտով կգանք, Լուսիկն արդեն լավ է...

Լուսիկի մայրը դարձյալ շոյեց շնիկին, առավ տիկնիկն ու ներս գնաց:

Շնիկը մի քիչ լաց յեղավ, չանդոտեց դուռը, և տեսնելով վոր բաց անող չկա, վեր կացավ ու տխուր հեռացավ:

Կ Ո Ր Յ Ո Ւ Ն Ը

Մասկվայի Կենտրոնական Այգու մայր առյուծը շուտով պիտի կորյուններ ծներ: Վարիչը և գիտական աշխատակիցը լավ գիտեյին, վոր առյուծը յերբ վանդակում ծնում է, յերբեմն խժռում է իր կորյուններին, դրա համար էլ գիշեր-ցերեկ վանդակի մոտ պահակ էյին կանգնեցրել, վոր առյուծին թույլ չտային ուտելու իր նորածիններին:

Մայր առյուծը վանդակում յերկու կորյուն ծնեց: Չնայած բոլոր նախազգուշություններին, այնուամենայնիվ մայրը կորյուններից մեկին կերավ: Յերբ նա կատաղաբար հարձակվեց նորածին կորյունի վրա և սկսեց պատառոտել, այդ ժամանակ հազիվ կարողացան ազատել մյուսին:

Կորյուններից մեկը փրկված էր, բայց չգիտեյին ինչպես պահել նրան՝ առանց մոր խնամքի ու կաթի: Ախտ մտահոգված էյին վարիչը և գազանանոցի բոլոր ծառայողները:

Վերջապես շատ մտածելուց հետո, գիտական աշխատակցուհին առաջարկեց իր շտախանդական շունը, վորը կորցրել էր իր ձագերին և կաթի առատությունից նեղվում էր: Փորձեցին նրա կաթով մեծացնել կորյունին:

Փորձն անցավ հաջող: Կորյունը դնչով փնտրեց շան կուրծքը, գտավ, պտուկը բերանն առավ և սկսեց ագահաբար ծծել առատ կաթը:

Կորյունը փրկված էր: Աշխատակցուհին նրանց տեղափոխեց իր բնակարանը և սկսեց խնամել:


Քանի դեռ կորյունի աչքերը փակ էյին՝ շունը հանգիստ էր, բայց հենց վոր բացվեցին, ճանաչեց իր սննդատու մորը և չէր թողնում մոտից հեռանա. այնքան

սիրո՞ւմ էր: Շունն էլ իր հերթին այնպես էր կերակրում, լիզում, փայփայում կորյունին, ինչպես իր հարագատ ձագուկին: Մի ամիս անց, յերբ կորյունը վոտքի յելավ, մեծացավ, չէր թողնում, վոր շունը մի քայլ հեռանար իրենից: Միայն նրա քնած ժամանակ էր կարողանում շունը դուրս գալ բակը, իսկ յերբ կորյունը զարթնում և տեսնում էր, մայրը մոտը չէր, վորտեղից լինե՞ր՝ գտնում, վզից բռնած բերում դնում էր մոտն ու թաթը դնում նրա մեջքին, ասել է՝ «Չհամարձակվես տեղից շարժվել»: Շունը սկսեց նիհարել, տխրել, քանի մեծանում էր այդ բռնակալը, այնքան ավելի յեր ծանրանում շան դրուժյունը: Տան տիկինը շատ աշխատեց, վոր շունը մի քիչ ավելի ազատություն վայելի, չեղավ յեթե կորյունի կամքին չէյին յենթարկվում՝ կատաղած մոնչում էր ու հաստ փնջավոր պոչի ծայրով հարվածում հատակը:

Մի յերկու ամիս անց՝ կորյունն սկսեց ամեն բան ուտել, շուտով կտրվեց մոր կաթից, շունը դարձավ նրա համար միայն խաղընկեր: Շանը՝ գլորում էր գետին, քաչքչում փորի վրա. հետո պառկում էր, թաթերը բարձրացնում, իսկ յերբ շունը խաղալով մոտենում էր, մեկ էլ տեսար թաթերով մի կողմն էր շարժում նրան, հարձակվում վրան ու գոմոտալով՝ դնչով ցավեցրնելու չափ սկսում էր խտտել: Վորքան մեծանում էր կորյունը, այնքան վտանգավոր էր դառնում, կամ պետք էր չղթայել, կամ գազանանոց տեղափոխել: Բայց աշխատակցուհին, ձգձգում էր, չէր տանում գազանանոց, վորովհետև սիրում էր այդ փոքրիկ առյուծին:

Մի որ տան տիկինը տանը չէր, շունն էլ բակ էր գնացել, կորյունն էլ մենակ մնալով՝ մտել էր մահճակալի տակ ու քնել: Դուռը բացվեց և մեկը զգուշությամբ գլուխը ներս կոխեց, հազաց. տեսնելով վոր տանը մարդ չկա, ավելի համարձակ ներս մտավ և դուռը յետևից փակեց: Բացեց պահարանը, նայեց գրասեղանի արկղները, և ինչ վոր արժեքավոր բան գտավ, լցրեց դրպաններն ու ծոցը:

Այդ ձայնից կորյունը զարթնել էր, դուրս էր հանել գլուխը մահճակալի տակից, դրել էր թաթերի վրա ու



լուռ, հանդիստ հետևում եր անձանոթ մարդուն և ահանջները շարժում:

Անձանոթը վերջացրեց իր գործը, պատրաստվում եր դուրս գալու, յերբ կորյունը կամաց-կամաց, դարան մտած կատվի պես, փորի վրա սողալով մոտեցավ ու հարձակվեց նրա վրա, մարդը սարսափից ճչաց, կորյունը մի հարվածով ձեկեց նրա վերնագրեատը շապկի հետ

և ատամների մեջ թափահարելով՝ մի կողմ նետեց: Հետո մռնչաց և ցատկեց դռան կողմը, պատրաստվելով նոր հարձակման:

Անձանոթը վախեցած հետ-հետ դնաց, ցատկեց աթուղին, այնտեղից մագլցեց պահարանի վրա և մեռելի պես դունատ, ատամներն իրար խփելով և աչքերը չքուած՝ նայում եր ցած, իսկ կորյունը փովել եր փորի վրա և գլուխը դես ու դեն շարժելով՝ մուլտում եր կատաղի ու պոչով հարվածում հատակը:

Անձանոթը պահարանի գլխին նստած՝ չգիտեր ինչպես ազատվել այդ կատաղի գաղանից: Նա կծկվել եր և վախենում եր մի շարժում անել, վորովհետև ամենաթեթև շարժումից անգամ, կորյունը վեր եր ցատկում ու թաթերով այնպիսի հարվածներ եր հասցնում պահարանին, վոր քիչ եր մնում շրջվեր այն:

Այդ բուպեյին դուռը բացվեց, ներս մտավ տան տիկինը, շունն ել յետևից: Տանտիրուհին այլայլվեց, յերբ դուռը բաց գտավ, ապա անսովոր դրուժյան մեջ գրոնելով կորյունին, գլխի ընկավ, վոր մի բան է պատահել, բայց թե ի՞նչ, չեր կարողանում հասկանալ:

Կորյունը վտաքի յելավ, մռնչաց, հորանջելով աչքերը դարձրեց դեպի անձանոթը:

Տանտիկինը վախից ճչաց ու վազեց ոգնություն կանչելու, շունը նկատելով անձանոթին, բացեց ժանիքները և մոռաց:

Այդ ձայնի վրա ներս թափվեցին հարևանները, կարծելով վոր կորյունն է հարձակվել:

— Ի՞նչ է պատահել:

Տանտիկինը մատով ցույց տվեց պահարանի գլխին նստած մարդուն. բոլորը հայացքները դարձրին այն կողմը:

— Ո՞վ ես, ի՞նչ ես անում այդտեղ:

Անձանոթը դողողալով և աղաչական ձայնով շրջնաց.

— Առե՛ք... բոլո՛րը... ազատեցե՛ք, ուչքս դնում եմ:

— Ո՞վ ես:

— Յե՞ս:

— Յես, գող եմ...

ՊՈՂՈՍ ՔԵՌՈՒ ԿՍՏՈՒՆ

Պողոս քեռին մի անատամ կատու ուներ:

Թե ինչո՞ւ էր այդ կատուն անատամ, իսկի ինքը՝

Պողոս քեռին ել չգիտեր:

Պողոս քեռին շատ բարի մարդ էր. նա գրպանում միշտ մի կըտոր հաց էր պահում ու վորտեղ սոված շուն կամ կատու յեր հանդիպում, իսկույն ժպտալով ձեռքը դրպանն էր տանում, մի կտոր հաց կտրում, գցում էր այդ սոված կենդանու առաջ: Պատահում էր, վոր քաղցած շները ընկնում էյին նրա յետեւեց ու մինչև տան դուռը ճանապարհ դնում. նա ել նրանց կերակրում էր ավելցուկներով:

Մի օր Պողոս քեռին վերարկույի մեջ կծկված՝ տունն էր շտապում:

Աշնանային բարակ անձրևը մաղում էր, հա մաղո՞ւմ: Իր տան մոտերքում նա հանդիպեց այդ կատվին, վոր կուչ էր յեկել պատի տակ՝ թրջված, ցեխոտված ու ամբողջ մարմնով դողալիս. պոչը թույլ-թույլ կախվել էր և ծայրը թավալվում էր ցեխի մեջ:

Պողոս քեռին մոտեցավ, կանգ առավ կատվի գըլխավերևը, մի քանի անգամ փխի՛ր-փխի՛ր արավ. կատուն մի խղճալի մլավոց արձակեց, բարձրացրեց գլուխը, իր կտոր անկյանք աչքերով նայեց Պողոս քեռուն ու կրկին մլավեց. կարծես ոգնություն էր խնդրում:

— Խե՛ղճ փխիկ, քաղցած ես, հա՞... — ու մի կտոր հաց գցեց նրա առաջ:

Կատուն վերցրեց հացը, փորձեց ծամել, բայց քիչ անց վայր գցեց պատառն ու կրկին մլավեց:

— Ե, ի՛նչ է՞ փխիկ, վախճանդ հասել է, քանի վոր ծամել չես կարող... —

Ու նա շարունակեց ճանապարհը:

Փողոցի դռանը մի քանի բույե կանգ առավ, մեկ մտածեց յետ գնալ վերցնել այդ հիվանդ կատվին, մեկ էլ, թե գուր է, մեկ է՝ չի ապրի:

Բարձրացավ աստիճաններով յերկրորդ հարկ, բացեց սենյակի դուռը, ուղեց ներս մտնել, հանկարծ յետեվից լսեց մի մլավոց. յետ նայեց. տեսավ այն անպաստան կատունն էր:

— Ա՛յ դու անպիտան, — ուրախացած բացականչեց նա:

— Բա չէյի՛ր կարողանում քայլել... —

Պատասխանի փոխարեն՝ կատուն խղճուկ ձայնով մլավեց:

— Դե լավ, կաց, քեզ համար ուտելու բան բերեմ:

Կարծես հասկանալով կատվի միտքն ասաց նա ու ներս մտավ: Քիչ անց՝ թղթի կտորի վրա դրած՝ դուրս բերեց կերակրի ավելցուկ, հացի կտորտանք ու դրեց նրա առջև.

— Դե կե՛ր:

Կատուն մոտեցավ կերակրին:

Պողոս քեռին բարի գիշեր մաղթեց նրան ու դուռը փակեց:

Մինչև անավոտ, կատուն կուչ էր յեկել դռան առաջ փռված փոքրիկ ու մաշված կարպետի վրա և դեռ քնած էր:

— Ոհո՞, դու դեռ այստե՞ղ ես... —

Կատուն Պողոս քեռու ձայնի վրա բացեց աչքերը, դանդաղորեն բարձրացրեց գլուխը, բայց աչքերն ելի փակվեցին:

— Լավ, լավ, քնի՛ր, հոգնած ես, քունդ տանում է:

Պողոս քեռին թեյի համար ջուր դրեց, լվացվեց ու նստեց գրասեղանի մոտ, վոր մինչև ջրի յեռալն աշխատի, բայց հազիվ էր նստել, յերբ դրսից լավեց կատուների կոպի ձայնը. լավեց հիվանդ կատվի խղճալի մլավոցը և արագ դուրս յեկավ պատշգամբ:

Մի դեղնավուն վագրի մորթով կատու, վայրի ձայներ էր հանում ու ատամներով, ճանկերով սպառ-

նում եր պատին կպած, սարսափահար ու թրջված կատ-
վին:

Պողոս քեռին հալածեց կովարարին ու դարձավ դե-
պի թրջվածը:

— Ե՛ փխտ, բանդ վատ ե, եղ անպիտանը քեզ հան-
գիստ չի տա, արի ներս, արի, ել ճար չկա, փխտի՛ փի-
սի՛-փիսի՛... .

Կատուն փորի վրա սողալով՝ մտալ սենյակ:

— Սպասի՛ր, քեզ համար տեղ դցեմ... . այ, եստեղ,
դռան մոտ... .

Կատուն մոտեցավ, նստեց յետին վոտքերի վրա ու
չնորհակալության փոխարեն մլավեց:

— Քիչ սպասիր, հիմա թեյ կխմենք:

Չուրը յեռաց, Պողոս քեռին հաց կտրատեց, պանիր
հանեց ու մի բաժակ թեյ լցրեց:

— Միտո՛ւ... միտո՛ւ... .

Վոտները մոտ նա լսեց կատվի ձայնը և ժպտալով
ցած նայեց:

— Քաղցած ես, հա՞... դե առ կեր... .

Պողոս քեռին ժպտալով նայում եր կատվին, վորն
ազահուլթյամբ հարձակվեց հացի պատառի վրա: Առավ
բերանը, ծեր, անատամ մարդու նման ծնոտները շար-
ժեց, լմլմացրեց ու ցած դցեց՝ ելի խեղճ-խեղճ մլավե-
լով:

— Ա՛յ դու անպիտան, յերես առածի մեկը, ցամաք
հաց չես սիրում, հա՞, յերեւի հարուստ տան կատու ես
յեղել. բա յես քեզ ինչո՞վ կերակրեմ. խորովածո՞վ, թե
ճափ մսով... .

Պողոս քեռու բոլոր ասածներին կատուն պատաս-
խանում եր մլավոցով:

Պողոս քեռին հաց ու պանիր ծամեց ու տվեց կատ-
վին. այս անգամ նա հաճույքով և ախորժակով կլանեց,
ապա դունչը լիզելով՝ աչքերը հառեց նրա աչքերին:

Միայն մի քանի որ անց Պողոս քեռին հասկացավ,
վոր թչվառ կենդանին ատամներ չունի: Այնուհետև նա
սկսեց կերակրել կատվին սուպի կամ կաթի մեջ բրթած
հացով: Իսկ յեթե կաթ, կամ սուպ չէր լինում, ուղղակի
ծամում եր հացն ու տալիս:

Պողոս քեռին յերբեք չէր բարկանում նրա վրա, ա-
սենք կատուն տեղիք չէր տալիս: Այնքան խելոք եր,
մաքրասեր: Գող չէր, ինչպես սովորաբար լինում են
կատուները: Յեթե ամբողջ որը ուտելու բան չտայիր,
ինքը չէր վերցնի:

Որը մի յերկու անգամ ել դուռը շանգուտելով և մը-
լավելով հասկացնում եր, վոր բակ ե ուզում դնալ և
հարեման կտուրի վրա քիչ թափառելուց հետո, կրկին
վերադառնում եր տուն:

Նա ավելորդ բուպե չէր կորցնում դուրսը, վորպեսզի
չհանդիպի այն դեղին կատվին:


Շենց առաջին հանդիպումին՝ ատեց նրան և խուսա-
փում եր նրա հետ կովի բռնվելուց. քանի վոր նա իրե-
նից ուժեղ եր: Բայց ինչքան ել զգուշանում, ինչքան ել
խուսափում եր, ելի յերբեմն հանդիպում եյին իրար, և
յեթե փախչելով չէր կարողանում ազատվել, ամբողջ
ձայնով ողնություն եր կանչում:

Այդ ձայնի վրա Պողոս քեռին առնում եր հասա
ձեննափայտն ու դուրս պրծնում՝ ողնելու իր սիրելի
կատվին:

Մեկ-մեկ ել, յերբ Պողոս քեռին տանը չէր և կա-
տուն փակված եր լինում սենյակում, դեղին կատուն
գալիս բարձրանում եր պատուհանի յերկաթե ձողերի
վրա, չանկրտում, մլավում ու աշխատում մի կերպ
ներս մտնել:

Իսկ Պողոս քեռու կատուն անվրդով նստած թախտի
վրա՝ նայում եր նրա ապարդյուն ճիզերին և ժպտում
դուհ:

Մի ամսից ավելի յեր, ինչ դեղին կատուն կորել
եր, ել վոչ մի տեղ չէր յերևում: Մեր փխտն ուրախ
եր, վոր ազատվել ե այդ զզվելի և աներես կատվից.
Համարձակ դուրս եր գալիս պատշգամբ, կտրին ման եր
գալիս, թավալում եր ձյունի վրա ու մորթը մաքրում:
Մաքուր- մաքուր լողացած և մի քիչ ել մրսած՝ գալիս
մտնում եր թիթեղյա վառարանի տակ, պառկում կամ
գլուխը դնում թաթերի վրա և յերգում միալար՝ մի-
տո՛ւ, միտո՛ւ... .



Այդպես, նա բոլորովին մոռացել էր նրա զոյու-
թյունը, յերբ մի որ պատուհանից սարսափով նկա-
տեց պատշգամբի վրա այն դեղին կատվին: Իսկույն
նեքքե ցատկեց վախեցած, մտածելով, վոր այդ դեղին
կատուն նորից փորձ կանի ներս մտնելու: Մի քիչ
սպասեց ցածում, ապա ցատկեց դեպի պատուհանը,
տեսնելու, թե ի՞նչ է անում դեղին կատուն պատշգամ-
բում: Քնչ խեղճացե՛լ էր, նիհարել, փորը ներս ընկել,
կողերը մեկ-մեկ կարելի յեր համբել. նրան թվաց, թե
դա ուրիշ կատու յեր: Կանգնել էր դռան առաջ և վո-
ղորմելի ձայնով մլավում էր, այն աստիճան ցավազին
վոր Պողոս քեռին չհամբերեց ու դուրս յեկավ պատը-
զամբ: Այս անգամ չփախավ ինչպես միշտ, աչքերը հա-
ռած քեռու աչքերին՝ խեղճ-խեղճ մլավեց:

— Եղ ի՞նչ որն ես ընկել ա՛յ վայրենի, — ու խղճա-
լով մի կտոր հաց ավեց նրան Պողոս քեռին, հետո դու-
ռը փակեց, վոր սենյակը չցրտի:

Դեղին կատուն ամեն որ նույն ժամին դալիս կանգ-
նում էր դռան մոտ և մինչև ուտելու բան չէր ստա-
նում՝ չէր հեռանում:

Մի որ ել՝ նրա մլավոցներին խառնվեցին ուրիշ ա-
վելի նուրբ ու բարակ ձայներ:

Պողոս քեռին դարմացած թողեց գիրքը, վեր կա-
ցավ տեսնելու, թե այդ ի՞նչ ձայներ են: Փխտոն ել դուրս
յեկավ վառարանի տակից և գնաց Պողոս քեռու յետե-
վից:

Յերբ դուռը բացվեց՝ պատշգամբի վրա նստած էր
դեղին կատուն, շրջապատված չորս փոքրիկ դանազան
գույնի ձագուկներով, վորոնք դես ու դեն էյին ընկ-
նում:

— Ո՛հ, ես ի՞նչ ե. ես վո՞րտեղից...

Կատվի ձագերն իրար անցան. իրար հրճտելով
գլուխները դռնից ներս կոխեցին և փխտոյի վրա ուշ չը-
ղարձնելով՝ սկսեցին սենյակը մտնել:

— Սպասե՛ք, սպասե՛ք... եղ ուր... ձեզ ո՞վ թույլ
տվեց... — կանչեց Պողոս քեռին:

Պողոս քեռու կատուն նայում էր դուրս վախեցած,
զայրացած ու սպասում, թե Պողոս քեռին ի՞նչ է անելու

այդ գզվելի կատվին, վոր այդքան վատություն անե-
լուց հետո՝ առանց ամաչելու, տնով տեղով վեր էր կա-
ցել յեկել: Վոչ, չի թողնի վոչ մի պայմանով, մինչև
արնաքամ լինելը կկովի, բայց նեղս չի թողնի: Պաշտ-
պանողական գիրք բռնած նայում էր, յերբ դեղին կա-
տուն մի քայլ առաջ էր գալիս, նա կատաղությամբ
փշտացնում էր և նրա մեջքի մազերը ցցվում էյին վոզ-
նու փշերի նման:

Մինչ այդ՝ ձագուկներն իրար կոխկրտելով, իրար
գլխի վրայից ցատկելով՝ հենց Պողոս քեռու կատվի
քթի տակից, վտերի արանքից ներս խուժեցին սենյակ և
խարխափելով դես ու դեն ընկան՝ բարով ձայնով մլա-
վելով: Գտնելով փխսիկի կերակրի ամանը, վորի մեջ
դեռ ուտելու բան էր մնացել, իրար յետեից վրա տվին
մուրտալով, գլխակոնծի տալով՝ մաքրազարդեցին այն
և դեռ չկշտացած, սկսեցին ելի ձվձվալ — «թե չենք
կշտացել»:

Պողոս քեռին այդ անսպասելի հարձակումից շփոթ-
վել էր... Նա բարեհոգությամբ նայում էր այդ տեսա-
բանին և անմիտ կերպով ժպտում: Իսկ նրա փխտոն աչ-
քերը հառել էր պատշգամբում նստած դեղին կատվի
վրա և վոչ մի կերպ ներս չէր թողնում նրան:

Պողոս քեռու կատուն, շնորհիվ լավ սնունդի,
խնամքի, գերացել էր, ուժեղացել, գեղեցկացել: Ել
դժվար էր հավատալ, վոր դա այն թրջված, ցեխոտ-
ված, անատամ կատուն էր, վոր հազիվ էր քարշ տալիս
վտտները: Ախորժակն էլ լավ էր, ինչքան տայիք կու-
տեր:

Իսկ դեղին կատուն, ամեն առավոտ, նույն ժամին,
ձագերը հավաքած, դալիս կանգնում էր սենյակի առաջ
ու անասելի ձվձվոցով իմաց տալիս, թե յեկել ենք:

— Ը՛հ, յեկան, — ասում էր Պողոս քեռին արդեն
ձանձրացած, և չքիտեր, ի՞նչպես ազատվեր այդ կատ-
վի բազմանգամ ընտանիքից:

Իսկ փխսիկը, յերբ դրսից լսում էր այդ ձայները,
մտանում էր դռանը և աղերսագին մլավելով մեկ դը-
ռանն էր նայում, մեկ Պողոս քեռուն. կարծես ուզում
էր ասել. «Մեղք են դուռը բաց»:

Յերբ դուռը բացվում էր, ձագուկները քաղցած
դասերի նման վրա ելին տալիս և մի քանի բոպեյում՝
չփչփացնելով խժռում ելին ամանի միջի պարունակու-
թյունը: Փխտն նստած յետին թաթերի վրա նայում էր
նրանց և կարծես ժպտում էր:

Պողոս քեռին չէր ուզում հավատալ, վոր իր կա-
տուն կիսաքաղց էր մնում, վոր բաժին հանի իր թըշ-
նամու ձագուկներին: Դա նրան գրեթե անհավատալի
յեր թվում: Վճռեց ստուգել, սկսեց որը որի վրա քչա-
ցընել կատվի բաժինը, բայց ինչքան ել վոր պակաս-
ցնում էր, այնու ամենայնիվ կատուն մի քիչ թողնում
էր ամանի մեջ: Վերջապես Պողոս քեռին այնքան պակ-
սեցրեց, վոր յեթե կատուն հինգ անգամ դրանից ավե-
լին ուտեր, նորից սոված կմնար, բայց այս անգամ ել
կատուն բոլորը չկերավ, դունչը լիզելով հեռացավ ա-
մանից, նստեց հետին թաթերի վրա և հարցական
նայում էր Պողոս քեռու աչքերին:

Յերբ ձագուկների ձայնը լսեց, ուրախ վեր ցատկեց
տեղից, վազեց դեպի դուռը, հետ յեկավ, փարվեց Պո-
ղոս քեռու վրաներին ու մուտաց. ապա թախանձագին
մլավեց: Իսկ յերբ ձագերը ներս մտան և Պողոս քեռին
դուռը փակեց նրանց մոր վրա, կատուն մոտեցավ փի-
սիկներին, վոր արդեն գործի ելին անցել, խանդաղա-
տանքով սկսեց նայել մեկ այս մեկ այն ձագուկին:

Պողոս քեռին փիսիկի մեծահոգությունից հիացած
ու զարմացած՝ գրկեց այդ խելոք ու բարի կենդանուն,
կպցրեց այտին նրա փափուկ մորթը:

ՄԿԱՆ ՊՈՉԸ

Այ, դո՛ւք ասեք, ո՞վ է ավելի խորամանկ, Գա-
գի՞կը, թե՛ մկնիկը:

Գագիկը տասը տարեկան էր, իսկ մկնիկը՝ չգիտեմ
քանի:

Գագիկը շատ էր սիրում քաղցրեղեն, մուկն ել պա-
կաս չէր սիրում:

Գագիկի համար յեթե կոնֆետ, մուրաբա կամ մի
այլ համով բան չէր գտնվում, շաքար հո կար՛: Մուկն
ել նույնպես ամենից հեշտ շաքար էր գտնում:

Յերբ ամառանոցից Գագիկը և մայրը վերադար-
ձան, Գագիկի մոր առաջին գործն յեղավ ստուգել թե
ի՞նչ դրուժյան մեջ են ներքնատանը պահված մուրա-
բաները:

— Հողը գլխիս... քոռանամ յես, բոլո՛րը, բոլո՛րը
փչացել է, — ասաց մայրը վերադառնալով ներքնատանից:

— Ի՞նչն է փչացել:

— Անիծված մկները կեղտոտել են, բանկաների բե-
քանները ծակել:

— Վո՞ր մուրաբի:

Բոլորի:

— Բա հո՛, ախոսս՛, եդ լավ չեղավ: Բոլո՞րն են վը-
չացրել:

— Վարդն ել, ընկույզն ել, բալն ել, սպիտակ կե-
տանն ել:

— Պա՛հ, պա՛հ, պա՛հ, ախր ահագին փող է նստել,
քիչ ել չէր, չորս բանկա:

Հայրիկը և մայրիկը իջան ներքնատուն: Գագիկն ել
մի բոպե կանգնած մնաց տեղում ու մի բան հիշելով,
խնքն ել գնաց:

Բոյոր չորս բանկաների բերանները ծակծկված էջին, ու միջի մուրաբան բավականին իջել եր:

— Բա ի՞նչ պիտի անենք, — մոլորված հարցրեց մայրը:

— Ի՞նչ պիտի անենք, թափենք:

— Թափել, — հարցրեց մայրը:

— Բա ի՞նչ:

— Մայրի՛կ ջան, չթափես, — մեջ մտավ Գաղիկը, — յես կուտեմ:

— Մկնոտ մուրաբան ի՞նչպես կարելի յե ուտել:

— Վոչինչ, մայրիկ, յես շատ եմ սիրում մկներին, իսկի չեմ զզվում:

Թեև վորոջված եր, վոր մուրաբանները թափեն, բայց այդ որը չթափեցին:

— Վոտս կոտորվեր ամառանոց չգնայի, — գանգաւովում եր մայրիկը:

— Դե լավ, ի՞նչ է յեղել, շատ մի մտածիր, — ասում եր հայրիկը:

Գաղիկը մի քիչ ժամանակ պտույտ յեկավ մուրաբանների շուրջն ու դուրս գնաց:

Մի որ Գաղիկը ծածուկ մի հացի գդալ դրեց գլխու պանն ու կամացուկ իջավ ներքնատուն:

Յերբ դուռը ճոռայով բացվեց, նա նկատեց, վոր մի քանի մկներ արագ դես ու դեն փախան: Մեկը, վոր մնացել եր բանկայի գլխին, կրոր պսպղուն աչքերով նայում եր իրեն, անվախ քաջի պես:

Գաղիկը կանգնած տեղը կատվի նման մլավեց ու մի քանի քայլ արավ դեպի մուրաբանները:

Մկնիկն իրեն բանկայի գլխից ցած նետեց և արագ պոչը քարշ տալով, մտավ կճուճների արանքը:

Գաղիկը բանկաների մոտ չոքած, լավ դիտեց ներսը, մուկ չերեկաց: Գրպանից հանեց գդալը, զգուշութեամբ յերեսիցը քաշեց թափեց, ապա գդալը կոխեց մուրաբայի մեջ, խառնեց, բայց մուկ, բան չգտավ: Ախորժակով մի կուշտ կերավ բոլոր տեսակի մուրաբաներից, լիզեց գդալը, կոխեց գրպանը, բերանը սրբեց ու դուրս յեկավ:

Եսպես սուս ու փուս՝ Գաղիկը բոլոր բանկաները կդատարկեր, յեթե մի որ մուրաբա ուտելիս մայրը վրա չհասներ:

— Ա՛յ տղա, եդ ի՞նչ ես անում:

Գաղիկը վեր թռավ տեղից, մուրաբան կաթիլթացնելով զգեստների վրա, ուզեց գդալը գրպանը կոխել, բայց արգեն ուչ եր, մայրը նկատել էլ:

— Գոռանա՛մ յես... շուտ գնա բերանդ լվա... կըհիվանդանաս, կվարակվես, ով գի՞տե ինչ հիվանդություն կստանաս, ախր չգիտես, վոր դրանց մեջ մուկ կա:

— Մայրիկ, մուկ չկա:

— Ի՞նչ գիտես:

— Գիտեմ:

— Ել ես կե՞րել...

— Շատ:

— Կտրվես դու, հա, կտրվե՛ս:

— Մայրիկ, դո՛ւր ես բարկանում, չեմ հիվանդանա, իսկի ել չեն փչացել, այնպես լավն են, ա՛յ, ուզում ես փորձիր:

Եդ որվանից Գաղիկի բախտը բանեց, ել ծածուկ չեր ուտում. ամեն որ թեյի ժամանակ խորը պնակով մուրաբան բերում դնում եր առաջ և համով-համով ուտում:

Հայրը տեսնելով, վոր տղեն այդպիսի ախորժակով ուտում է, չի զզվում, ինքն ել մտածեց, վոր ի՞նչ կա զզվելու, մի փորձեմ: Առաջ մի թեյի գդալի ծայրով, հետո կամաց-կամաց ինքն ել սկսեց կարգին ուտել:

Մայրիկն ել կարծես այնքան դեմ չեր, վոր փորձի:

Եդ բանը Գաղիկին վախեցրեց:

— Բա վոր բոլորն ել սկսեն ուտել... չե՛, չե՛, պետք է մի բան հնարել:

Յեվ նա հնարը գտավ:

Ներքնատնից բանկաները վեր հանեց ու գդալով բնկույզները դես ու դեն տալով, գդալի մեջ նկատեց մկան նման մի բան:

— Վա՛յ, մո՛ւկը, մո՛ւկը... — կանչեց նա ու ձեռքը

բանկայի մեջ կոխելով՝ բռնեց պոչից, վեր բարձրացր-
րեց ու խսկույն բաց թողեց:

Մայրը զզվանքով ճչաց:

Դրանից հետո՝ ել վոչ վոք չմոտեցավ մուրաբա-
ներին, իսկ Գագիկը հանգիստ մաքրազարդեց չորս բան-
կան ել:

Յերբ արդեն բանկաները դատարկ էյին, նա թեյի
ժամանակ ծիծաղելով ասաց մորը.

— Մայրիկ, դու կարծում ես մուկը մուրաբա ու-
տելու համար բանկայի մեջն է մտնո՞ւմ:

— Մեջն է մտնում, թե չե, բայց ասլականում,
կեղտոտում:

— Իսկի ել չե, պոչն է մենակ մեջը կոխում:

— Հետո ինչպե՞ս է ուտում:

— Շատ հեշտ, յես մի գրքում կարդացի: Մկները
քաղցր շատ են սիրում:

— Քեզ պես:

Գագիկը ժպտաց:

— Մի տեղ վոր մուրաբի բանկա յեն տեսնում՝
հավաքվում են, մեկը բարձրանում է բանկայի բերանը
ծակում, ասլա պոչը կախ տալիս ներս, թաթախում է
մուրաբայի մեջ, հանում է կախ անում: Տակը կանգ-
նած մկները ծծում են պոչը, մինչև կշտանում են: Հետո
վերևի կանգնած մուկն իջնում է, տակը կանգնած մրկ-
ներից մեկը, վոր ել ուտել չի ուզում, բարձրանում է
բանկայի վրա և իր պոչը թաթախելով մուրաբայի մեջ՝
հրամցնում է ցածր կանգնածներին: Յես այդ գիտեյի,
գրա համար ել իսկի չեյի պղծում:

— Իսկ պոչը...

— Պոչն ի՞նչ է վոր...

— Մկան պո՛չը...

— Ի՞նչ անենք:

— Իսկ այն մուկը, վու ընկույզի բանկայից հա-
նեցիր:

— Հա՛, հա՛, հա՛, ... մայրիկ, այն մուկ չեր, հա-
մեմունքների տոպրակն էր:

— Ա՛յ դու խորամանկ, անպիտան տղա, բայց և
այնպես մկան պոչոտ եր և դու կերար:

ՄԻ ՄՈՒԿԻԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Փոքրիկ մի մուկ, այնքան փոքրիկ, վոր պոչն ի-
բենից մեծ եր, դուրս յեկավ բնից, խոհանոցի բոլոր ան-
կյունները պտտեց, ել տեղ չթողեց, բայց մի չոր հա-
ցի փչրանք անգամ չգտավ:

Քաղցից սիրտը գնում եր:

Նա նոր եր սկսել ինքնագլուխ ասլրել: Մայրը նրան
արդեն չափահաս համարելով՝ ազատել եր իր խնամ-
քից: Նա այնքան անփորձ եր, այնքան քաղցած, վոր
համարձակ, պոչը հետևից շարժելով, արագ ու շտապ
մտավ թախարղը: Դուռնը հաղիվ եր կպել ճարպի կտո-
րին, յերբ մի այնպիսի ճայթուն լսեց, վոր վախից վեր
թռավ: մեջքն ամուր խփեց թախարղի յերկաթե լարե-
րին: Նա չհասկացավ, թե ինչ պատահեց, դեռ բոլորո-
վին ուշքի չեր յեկել, յերբ արդեն շրջապատված եր մի
քանի յերեխաներով, վորոնք ինչ վոր անհասկանալի
ձայներ էյին հանում:


Մեր մուկիկը, կլոր հուլունքի նմանվող աչքերով՝
վախեցած նայում եր մանուկներին, վորոնք նրան այն-
պես ահուելի ու հսկայական էյին թվում, վոր նրա փոք-
րիկ սրտիկը ժամացույցի պես բարախում եր. տիկ-
տա՛կ, տի՛կ-տա՛կ...

Նա քաղցն ել մոռացավ, ամեն բաննն ել. չգիտեր
ի՞նչ եր լինելու, ու բնագոյրեն վախից ամբողջ մար-
մընով սրթսրթում եր:

Թախարղի մեջ շատ դես ու դեն ընկավ, փոքրիկ
թաթիկներով չանգոտեց յերկաթյա լարերը, խփվեց
ամբողջ ուժով դռանը, բայց դո՛ւր, դուրս գալու, ա-
զատվելու հնար չկար:

— Դուռը բաց չանես:

— Տուր ինձ, դու կփախցնես:



—Յեկեք պոչը կապենք:

—Վազիր թե՛լ բեր:

Տղաներից մեկին արագ վազեց:

Արդյոք ի՞նչ են մտազիր անելու, — մտածում էր մուկիկը, աչքերը սևեռած տղային, վորի ձեռքին թափարդն էր:

Շուտով վերադարձավ թե՛լի գնացող տղան և նորից

սկսվեց մուկիկի համար անախորժ գորգուոց, վորից նա վոչինչ չհասկացավ:

— Պո՛չը բռնիր... եղպե՛ս:

— Պի՛նդ, պի՛նդ կապիր:

— Լավ է:

Մուկիկի պոչը թելով կապեցին ու բաց արին թափարդի դուռը:

Մուկիկն առաջ չիմացավ ինչ անի, բայց նկատելով թափարդի բաց դուռը, իրեն դուրս նետեց թափարդից և վազեց դեպի պատի տակ թափված քարակույտը, սակայն կես ճանապարհին մի բանի հանդիպեց և չկարողացավ առաջ շարժվել. հեռ-հեռ գնաց ու ելի ազատ գգալով իրեն՝ վազեց աջ, ձախ, բայց ամեն անգամ մի անիծյալ բան խանգարում էր:

Լավում էր տղաների ուրախ ծիծաղը:

Յեթե կարողանար՝ լաց կլիներ, մայրիկ կկանչեր, բայց վախից այնպես էր իրեն կորցրել, վոր վոչ մի բան չէր հիշում: Հրդեհի մեջ ընկածի նման իզուր դեռ ու դեն էր վազվզում:

Նա հուսահատ, չանգոտելով ծառերի վրա էր մագլցում: Ծառերից թափված դեղնած տերևների տակն էր մտնում, կարծում էր թաղնվեց և այլևս չեն կարող գտնել: Բայց թե՛ն ամուր սղմում էր պոչի ծայրը և ամեն տեղից էլ ձգում, դուրս էլին բերում իրեն:

Յերեսանների ուրախ ծիծաղը քանի գնում ցնծալից էր դառնում: Իսկ մուկիկի սիրտը քիչ էր մնում ճաքեր:

Հանկարծ ինչ պատահեց՝ ինքն էլ չհասկացավ, մի սուր ցավ գգաց, ճչաց ցավից և ամբողջ թափով իրեն մի կողմ նետեց, ինչքան վտանգում ուժ էր մնացել՝ վազեց, հասավ փեթակներին և մտավ նրանցից մեկի տակ: Կարծում էր, վոր այդ տեղից էլ դուրս կհանեն, բայց ուրախացած նկատեց, վոր վոչ. արագ մտավ մի ուրիշ, ապա յերրորդ, չորրորդ փեթակի տակ, այդպիսով հեաքը կորցրեց:

Յերբ էլ չէլին լավում յերեսանների ձայները, նա իրեն ազահով գգալով նստեց, վոր քիչ հանգստանա, բայց նկատելով պոչը, վորի ծայրը մնացել էր թե՛լի վրա, տղաների ձեռքին, շատ ափսոսաց, քիչ էր մնում

լաց լիներ: Սակայն հիշելով, թե պրծավ վատ յերեխաների ձեռքից, այնպես ուրախացավ, վոր շուտով մոռացավ պոչի հետ պատահած դժբախտությունը:

Մի քիչ անց, նա ելի քաղց զգաց, վոր վախից մոռացել էր, սիրտը խառնում էր, աչքերը սևանում: Քաղցած զկրտում էր, ի՞նչ անի, վոր տեղից ուտելիք գտնի այս անծանոթ պարտիզում, ուր նրան բերին այն յերեխաները, ինչպես կրկին բույնը վերադառնար: Նա փոքրիկ դուրսը դուրս հանեց փեթակի տակից, և կլոր պսպղուն աչքերով սկսեց դիտել շրջակայքը: Տերևները թափվում էին ծառերից և գետինը ծածկված էր այդ դեղնած տերևներով:

Նա գուցե սիրտ չաներ դուրս գալ այնտեղից, յեթե քաղցը չստիպեր:

Վախվելով նա մի քանի քայլ առաջ գնաց, բայց չոր տերևների խշխշոցից լեղապատառ ելի վազեց նախկին տեղն ու յերկար դնչիկը ցցած նայում էր ու չէր համարձակվում դուրս գալ:

Քաղցն այնքան սաստիկ էր, վոր պոչի ցավն ել մոռացավ, վախն ել, մորն ել: Դուրս յեկավ թագստատեղից՝ սկսեց տերևների տակը քրքրել, հետո քայլել ըսկրսեց: Տերևները խանդարում էին, նա յերբեք չէր սիրում կամաց քայլել, միշտ վազելով էր մի տեղից մյուսը գնում:

Արեվն ել մայր մտավ, մթնում էր, ցուրտ էր: Հանկարծ մի անուշ, շատ անուշ հոտ դիպավ քթին: Բարձրացրեց սուր դնչիկը և հոտոտեց: Նրան թվաց, թե այդ փոքրիկ տնակներից է դալիս այդ անուշահոտությունը, և առանց յերկար մտածելու, մոտեցավ փեթակներից մեկին. առաջին յերկու վարդագույն թաթիկները բարձրացրեց, նայեց ուշադիր և վտանգ չնախատեսելով՝ ավելի համարձակ բարձրացավ, հոտոտեց փեթակի արկը:

Կասկած չկար վոր հոտն այդտեղից էր... Քիչ մտածեց ու փորձեց դուրսը ծակից ներս կոխել. բայց անցքն այնքան նեղ էր, վոր չնայած իր փոքրությանը, այնուամենայնիվ ներս մտնելն անհնար էր: Նա փորձեց ձանկերով լայնացնել անցքը: Անուշահոտ ակնամոմի

փշրանքները թափվեցին և նա տեսնելով, վոր արգելք հեշտությամբ հաղթահարում է, յեռանդուն կապվ դործի. սկսեց ատամներով կրծել, ձանկոտել ու լայնացնել արկի բերանը, վորը նեղացնելու համար այնքան ջանք էյին թափել մեղունները, վոր պեսզի ձմեռը փեթակում տաք լինի, միայն մի փոքրիկ անցք էյին թողել իբրև ողանցք:

Շուտով նրան հաջողվեց այնքան լայնացնել արկը, թեթև ներս սողաց և կծկվեց պատի տակ:

Փեթակը դատարկ չէր: Լսվում էր հարյուրավոր մեղունների միտրինակ բզզոցը:

Փեթակում տարածված էր այն դուրեկան հոտը, վոր մուկիկը դեռ դրսից զգացել էր: Նա զգուշությամբ շարժվեց տեղից, մոտեցավ մեղրով լիքը մի շրջանակի և դուռնը դիպրեց մեղրին, հետ քաշվեց, լպստեց քթի ծայրը և ուրախությունից քիչ մնաց խենթանար: Այդքան քաղցր բան իր որում չէր կերել, հիշեց, վոր մայրը մի անգամ սպիտակ քարի պես մի բան բերեց, ա՛յն ել շատ քաղցր էր, բայց վոչ սրա չափ:

Մուկիկն այնքան յերջանիկ էր: Փեթակը տաք էր, իսկ մեղր՝ ինչքան ուզես: Նա կերավ, կշտացավ և մի ապահով տեղ գտնելով՝ կծկվեց, կտրած պոչիկն առավ յերկու հետի վոտների միջև, վոր չքավի գետնին և ցավ պատճառի: Այնքան հանդիստ էր և կուշտ, վոր շուտով խորը քուն մտավ:

Նա դեռ բոլորովին չէր կշտացել քնից և դեռ շատ յերկար կքներ, յեթե մի անսովոր աղմուկ չզարթեցներ նրան: Նա աչքերը բացեց և տեսավ, վոր շրջապատված է անհամար մեղուններով. վախեցած, սարսափահար վազեց դեպի արկը, վոր վախչի, բայց իզո՛ւր, մեղունները հասան հետևից: Հուսահատված նա պատից պատ էր դիպչում... Մեղունները բզզալով-տղղալով վրա էյին տալիս և անխնա խայթում: Առաջին խայթից նա այնպիսի սուր ցավ զգաց և ամբողջ ձայնով ու թաթիկներով սկսեց պաշտպանվել: Գազազած մեղուններն անխնա խայթում էյին՝ վորտեղը հասնում էր:

Մուկիկն սկսեց ուռչել... անասելի ցավ էր զգում, բայց շուտով անզոպացավ, և այնպես ուռեց, վոր էլ

չկարողացավ մնալ վրտները վրա: Ուսուցիչը քանի գը-
նում մեծանում էր, շուտով նա կորցրեց իր նախկին
տեսքը, ուսած տղի պես ընկավ, մեջքի վրա, և չորս
փոքրիկ թաթիկները վերցրեց:

Մեղուներն անխնայ են գեպի իրենց թշնամիները:
Նրանք լավ գիտեն, թե ինչ ավերածութուն կգոր-
ծեր այդ փոքրիկ մուկը, յեթե մի քանի օր ուշ նկատե-
ին: Վտանգված կլինեյին բոլոր բջիջները, վտանգված
կլինեյին ձմեռվա պաշարը, վոր այնքան դժվարությամբ,
կաթիլ-կաթիլ հավաքել էին... բոլորը սովի կմասնը-
վեյին այդ մուկիկի շնորհիվ:

Մուկիկն այլևս չէր շարժվում, անչնչացած ընկած
էր հատակին:

Մի քանի օր փեթակում բարձրացած հուզմունքը
չէր խաղաղվում: Թշնամու դիակն ընկած էր փեթակի
ներսում: Նեխվելով՝ սպառնում էր վտանգել փեթակի
ամբողջ կյանքը:

Մուկիկն այնպես էր ուռել, վոր արկից դուրս քա-
շելու հնարավորութուն չկար:

— Ի՛նչ անել...

Առավոտից մինչև յերեկո փեթակի մեջ իրարանցում
էր... կյանքն յեռում էր ինչպես գարնանը, յերբ մաք-
րում են փեթակը ու պատրաստվում են գարնան բերքա-
հավաքին:

Ինչ վոր շատ կարեւոր գործով էին զբաղված այդ
փոքրիկ խելոքները: Այնպիսի մի խլացուցիչ բզրոց էր
կանգնած փեթակում, վոր յեթե մեղվապահը պատահ-
մամբ մոտենար, շատ պիտի զարմանար այդ տարրի-
նակ հուզմունքից:

Յերեկոյան դեմ ամեն ինչ լռեց և մեղուները հան-
կըստացած կրկին անցան իրենց առօրյա աշխատանքին:

Գարնանը, յերբ մեղվապահը բացեց փեթակը, նկա-
տեց փեթակի հատակին մի մեծ կտոր ակնամոմ, զար-
մացած վերցրեց, շատ ծանր էր, չհասկացավ բանն ին-
չումն է, մոմի մեջ կարծես բան էր պահված, նա զգու-
շությամբ հետը տարավ մոմը և գարմանքից ապշեց:

Ակնամոմի մեջ զմռսված էր այն մուկիկը:

Ահա թե ինչպե՛ս են մեղուները պաշտպանում իրենց
սրունք:

Ինչ կլինեյր, յեթե մուկը մնար փեթակում և նեխ-
վեր, այլևս անհնար կլինեյր սպրել այդ ապականված,
անառողջ մթնոլորտում և հարյուրավոր ժրածան մեղու-
ներ զոհ կգնային մի նեխված մկան:

ՎԱՐՁՈՒ ԵՇԸ

Վաղ առավոտից լսվում էր փոքրիկ իշուկին փոքրիկ տիրոջ սուր ձայնը.

— Ե՛շ, վարձու ե՛շ...

Վզից կախած բոժոժիկների շարանը՝ նրա գլխի ամեն մի շարժումի հետ զնգնգում էր ու ախորժալի ձայներ հանում: Մեջքին փալանի փոխարեն դարչնագույն անգլիական փոքրիկ թամբն էր դրված, յեկու կողքերից ասպանդակներ կախ: Դեղին փայլուն կոճակներով զարդարուն սանձը տղան ձեռքն առած՝ իշուկին սրտաջընում էր ամառանոցի լայն ու յերկար, մի հարկանի, սպիտակ տների շարքերի միջով:

— Վարձու ե՛շ... վարձու ե՛շ...

Փոքրիկ, մոխրագույն, սև վոտիկներով իշուկը կարծես դոհ էր իր տոնական արդ ու զարդից. աշխույժ, հպարտ, ահանջները դիք ցցած, տիրոջից առաջ էր վազում, յերբեմն կանգ էր առնում փողոցի մեջտեղում, բարձրացնում էր մուլթը և յերկարատև յերեվեջներով գոում:

— Իհա՛... իհա՛... յեկեք, հա՛... յեկեք, հա՛...

Լսելով նրա ձայնը, ամառանոցի յերեխաները թողնում էին թեյի սեղանը և հացի պատառը ձեռքներին վազում փողոց, նայելու իրենց սիրելի իշուկին ու կրկին վազում պառչզամբ աղերսագին խնդրում մայրիկից, վոր թույլ տա իշով զբոսնելու:

— Մի որ վեր ե գցելու:

Չե՛ մայրիկ, ենպես խելոք ե՛շ ե, վոչ քացի յե տալիս, վոչ արտինգ, — ասում էր Գագիկն իր մորը:

— Դե եշ ե, մեկ ել տեսար քիթը քամի մտավ, քացի-քացի տալով՝ վեր գցեց ու փախավ:

— Մամա ջան, չես իմանում, ենքան խելո՛ք ե...



— Լավ, ճաշից հետո, իսկ այժմ նստիլ թեյը վերջացրու ու մի քիչ ել կարդա:

— Դե հիտուն կոպեկ սուր:

— Լավ:

— Սոստանո՞ւմ ես:

— Այո:

Գագիկը նստեց թեյի սեղանի մոտ, բայց ախորժա-

կը բոլորովին փակվեց: Գիրքը վերցրեց, վոր կարգա, — եչը մտքից չէր գնում: Ինչ սիրուն եչ է, — մտածեց նա, ահամա համեմատելով քաղաքում իր տեսած եչերի հետ, վորոնք բոլորովին նման չեյին սրան:

Կեզտոտ, մեծ փալանները մեջքերին, ածուխ, մաժուն, սոխ ու վարունգ, ինչ ասես չեյին բարձում նրանց վրա, յերբեմն այդ խեղճերին լծում էյին մրգերով, կանանչեղենով բարձած յերկու անիվանի սայլակին: Նըրանք այսպիսի ուրախ տեսք չունեյին, բեռան տակ կըռացած, դժվարությամբ էյին փոխում քայլերը, նրանց աչքերի մեջ կար մի տխրություն, կարծես պատրաստ էյին լաց լինելու:

Գլուխները կախ, յերկար ահանջները թույլ-թույլ որորվում էյին տիրոջ քայլերի հետ:

Յերբեմն նստում էյին և ել վո՛չ ծեծ, վո՛չ պոչից բարձրացնել, վո՛չ հայհոյանք չեյին ոգնում, համառությամբ կաչում էյին դետնին, ցավից տնքում, բայց տեղից չեյին շարժվում. այդ նրանց բողոքի ձեն էր: Դրա համար է, վոր ասում են «եչի համառություն», մի լավ հանգստանալուց հետո միայն վեր էյին կենում ու գնում:

Գազիկը կարծես առաջին անգամն էր եչ տեսնում. կարծես դա քաղաքում տեսած եչերի ցեղին չէր պատկանում, այլ մի ինչ վոր ուրիշ ցեղից էր, ավելի նման էր գազանանոցում իր տեսած գերբերին, բայց նրանք զուլավոր էյին:

Ի՛նչ գեղեցիկ են իշուկները, յերբ ազատ են, յերբ մարդը նրանց ուժից վեր չի ծանրաբեռնում, սնունդը տեղն է, վոսկորները դուրս չեն ցցված:

Նա շատ սիրեց եչերին և թվում էր, թե ձիուց ել գեղեցիկ են:

Յերբ Գազիկը լսում էր վարձու իշուկի ձայնը, ձեռքին ինչ լինեթ թողնում էր, վերցնում էր մի կտոր հաց, շաքար կամ մի այլ ուտելու բան, վոր իշուկը սիրում էր, ու վազում փողոց:

Իշուկը հաճույքով լափում էր նրա ափի միջի հյուրասիրությունը և գլուխն որորելով՝ գնում էր դե-

պի տղան, կարծես շնորհակալություն էր ուզում հայտնել:

«Ի՛նչ սիրունիկ եչ է», մտածում էր Գազիկը, մաքուր թամբ, սանձ, ասպանդակներ: Բեռ չի կրում, չեն ծեծում, մենակ որվա մեջ շուտ-շուտ մի տասն անգամ փոքրիկներ է դնում մեջքի վրա ու պտտեցնում փողոցներով: Ինքն ել ուրախանում է՝ վրան նստած յերեսաների պես:

Գազիկը չէր իմանում, վոր իշուկը միշտ այդպես ուրախ չէր, ինչպես այդ ամառվա ամիսներին: Յերբ ամառն անցնի, ամառանոցավորները գնան, նրա սանձն ու թամբը կհանեն, փալան կդնեն վրան, թուկը վզից կկապեն, ցորենի բեռը մեջքին դրած՝ ջրաղաց կքչեն: Նրա վոտներն ել ծանրության տակ կչովեն, յերբեմն կընկնի ծանր բեռի տակ, նրան ել կծեծեն, կհայհոյեն, ինչպես նրա բոլոր ցեղակիցներին:

Գազիկն այդ չգիտեր, իսկ իշուկն այդ յերջանիկ ուրբերին մոռացել էր բոլորը: Բայց ինչո՞ւ յեն մարդիկ այդքան անխնա՞ դեպի այդ համեստ, համբերատար կենդանիները:

Այնտեղից, ուր ավտոն ու կառք չեն անցնում, վորտեղից ձիերն անգամ դժվարությամբ են անցնում, նրանք անվախ, զգուշ քայլերով, փոքրիկ սիրուն սրմբակներով դուփելով գետինը, քարերը՝ անցնում են անգընդախոր ձորի յեղերքով, նեղ, ավազոտ արահետներով: Պետք է սիրել ու խնամել փոքրիկ կենդանուն, վորն այնքան նվիրված է մարդուն, այնքան հարկավոր է, մանավանդ մեր զառիվայրներով, մեր քարքարոտ, լեռնային նեղ ու դժվար կածաններով անցնելու համար:

Ամառանոցի փոքրիկ տղան դեռ բղավում էր.

— Վարձու ե՛չ, վարձու ե՛չ:

Յեվ յերեսաներն ուրախ ճիչերով շրջապատել էյին սիրուն իշուկին:

Հ Ի Լ Ո Ն

Փոքատերիեր ցեղից, սպիտակ մի շուն եր Հիլոն: Ձախ աչքի և պոչի մոտ՝ բաց դարչնագուլն խալեր ունեեր: Կարճլիկ եր, պոչը միշտ վեր ցցած, ականջներն ել խլած:

Նա շատ փոքր եր, յերբ նվեր ստացա: Հաստլիկ եր, կլոր, քայլում եր որորվելով:

Չգիտեմ ինչու Փոքսերի պոչը միշտ կտրած ե լինում: Յես ել վորոչեցի պոչը կտրել, բայց խղճում եյի, շարունակ ետոր եզուց եյի գցում:

Հիլոն մեծանում եր, պոչն ել հետը հաստանում, յերկարում ու շուտով այնքան կռվարանար կտրելը վոր գուցե շնիկն ամբողջ կյանքն անցկացներ յերկար պոչով:

Պոչը պետք եր կտրել նոր ծնված ժամանակ, յերբ դեռ աչքերը չեյին բացվել և մայրը լիզելով մի քանի րում կլավացներ պոչի վերքը:

Մի որ յեկավ ընկերս: Նրա հետ խորհրդակցեցինք ու վճռեցինք Հիլոյի պոչը կտրել: Այդ որվանից Հիլոն մնաց առանց պոչի:

Մինչև պոչը կտրելը նա արդեն բավականին վարժեցրած եր: Կանգնում եր հետի վոտերի վրա, պարում եր, յերբ սկսում եյինք յերգել:

Հիլոն ցատկում եր բարձր պահած փայտի վրայից և ելի մի քանի վարժություններ եր անում, շատ խելոք, ընդունակ շուն եր:

1919 թ. դժվարին ու քաղցի որերն եյին: Իմպերիալիստական պատերազմը յերկիրը հասցրել եր ծանր աղքատության: Այդ ժամանակ Հիլոն արդեն յերկու տարեկան եր, բարեկազմ, խելոք, վերին աստիճանի

աչխույժ շնիկ եր դարձել: Նա յերեխաների հետ «տափկընոցի» յեր խաղում, հազար ու մի խաղեր անում:

Այնպես եր սովորել ինձ, վոր չեր թողնում մի րոպե հեռանամ իրենից, իսկ յերբ դուռը փակում եյի վրան, սկսում եր աղեկաուր վնգստալ:

Մի անգամ, յերեք որով հեռացել եյի քաղաքից: Մայրս պատմում եր, վոր Հիլոն վոչ ուտում եր, վոչ խմում, շարունակ դես ու դեն եր ընկնում, վերջը գրանելով հին վերարկուս մտնում ե մեջը և հանգստանում:

Այդ ժամանակ վատ եյինք ապրում:

Մի որ տանը վոչ մի կտոր հաց չկար, արագ հագնելուցի, վոր գրսում մեկից փող խնդրեմ, հաց գնելու: Հիլոյին արգելեցի հետեւել ինձ:

Խեղճ կենդանին քաղցած եր, յերկու որ եր բան չեր կերել:

Շատ դես ու դեն ընկնելուց հետո, յերբ վոչ մի տեղից չկարողացա պարտք վերցնել, տխուր, տրտում գրանացի դեպի տուն, մտածելով գուցե կարելի կլինի հաքեվաններից քիչ ալյուր փոխ առնել:

Տանը չորս հոգի քաղցած ինձ եյին սպասում: Մըտքերի մեջ խորասուզված՝ ինքս ել չխմացա ինչպես եյի տուն հասել:

Ամեն անգամ, Հիլոն կարծես հոտառությամբ ըզգում եր իմ գալը և միշտ դիմավորում եր ինձ սանդուխների գլխին կանգնած, ծումովելով, կտրած պոչուկը շարժելով:

Այսոր, յերբ ինձ տեսավ, գժի նման գրեթե գլորվելով աստիճաններից հասավ, և ուրախ հաջոցով սկսեց փաթաթվել վոտքերիս, գալարվել, ցատկել վրա:

— Հիլո՛... Հիլո՛... լա՛վ լա՛վ, հանգստացիր, — շոյեցի նրա սիրուն գլուխը մտածելով՝ «Խեղճ շնիկ, ինչպե՛ս պետք ե հրաթափվես, հաց չեմ բերել»:

Աստիճանների գլխին կանգնած եր մայրս, ժպիտը գեմքին: Յես մեղավորի պես բարձրացա, նայեցի մորս աչքերին և չգիտեյի ինչ ասել... հաց չկա՛ր:

- Դո՞ւ եյիր ուղարկել:
- Ի՞նչ:
- Բա դու Հիլոյին բան չե՞ս տվել բերելու:

— Չե, ի՞նչ բան:

— Բա եղ վորտեղի՞ց ե... հողեմ գլուխդ, ա՛յ շուն... — ծիծաղելով կանչեց մայրս:

— Քիչ առաջ մի մեծ կտոր սպիտակ հաց բերեց, յես ել կարծեցի, թե դու ես ուղարկել:

— Յես բան չեմ ուղարկել, ով գիտե վոր աղբանոցից ե հանել:

— Չե, չե բոլորովին մաքուր, տաք-տաք հաց ե:

Ներս մտանք սեղանատուն: Սեղանի վրա դրված էր մի մեծ կտոր սպիտակ հաց: Մի քանի վայրկյան ապշած, կանգնած նայում էյի այդ անսովոր սպիտակ հացին, իսկ շունն ուրախ-ուրախ թռչկոտում էր, լիզում ձեռներս, կարծես սպասելով վոր գովեմ, խրախուսեմ նրա քաջագործութունը:

Այդ որը մենք Հիլոյի բերած հացով ապրեցինք:

ԽՈՒՈՎԱԾ ԿՈՎԸ

Բաղդո բիձու տարիքին միք նայի, թեև 59 տարեկան ե, բայց բոլոր յերիտասարդներից ել առաջ ե, հոգնել չգիտի, յերգ ու խաղով ե անում գործը, իսկ Հերիք-նազն ել ամբողջ շրջանում հայտնի բամբակ հավաքող ե:

Մինչև կոլտնտեսութուն մտնելը շատ նեղ որեր են քաշել Բաղդոն ու Հերիքնազը, մի տուն լիք յերեսխաներ ունեյին, վողջ որն աշխատում ու հազիվ էյին կարողանում հաց հասցնել: Բայց կոլեկտիվ մտնելուց յերեք տարի յե անցել, տունը լցվել ե ամեն տեսակի բարիքներով: Յերկու աղջիկներին մարդու յե տվել, մեծ տղան Յերեանի համալսարանումն ե, յերկու փոքրերն ել գյուղի դպրոցումն են սովորում. ել ի՛նչ դարդ: Հարվածային աշխատանքի համար ել մի կով էյին նվեր ստացել: Ամեն բան մի կողմ, եղ կովը՝ մյուս. այնպես էյին դողում վրան, ինչպես իրենց աչքի լույսի: Այդ կովը վոր տուն բերին, ել ուրախութուններին չափ չկար:

Նախիրից վոր գալիս, տան դռանը կանգնում, գլուխը բարձրացնում ու թավ ձայնով բառաչում էր, Բաղդո բիձու սիրտը սկսում էր արագ-արագ բաբախել:

— Չա՛ն, — կանչում էր Հերիքնազն ու վազում դուռը բանալու, բայց մինչև հասնելը, կովը գլխով հրում բանում էր դուռն ու ներս մտնում բակը:

— Հո՛, հո՛... Չեյրան, — ձայն եր տալիս Բաղդոն տեղից յեղնելով:

Բոլորի աչքը վրան էր, վողջ նախիրն էր Բաղդոյի կովը, կուրծքը տեղ չեր անում վտանների արանքում, 14 լիտր կաթ եր տալիս որակիան:

Հանգստի որ եր:

Նոր գնած ինքնայեռը— Հերիքնազը հաղիվ եր դրել
սեղանի վրա, յերբ լավեց կովի բառաչը:

— Յեկա՛վ...

— Սեփա՛ն, վաղիր դուռը բաց արա:

Տղան վեր թռավ տեղից ու մնաց կանգնած: Կոյը
ներս մտավ, նայեց դեռ ու դեն, մի անգամ ել բառաչեց
ու արագ գնաց գոմի կողմը:

— Մի տե՛ս, մի տե՛ս... Ջեյրանի նմա՛ն ե...

— Ա՛չքդ...

— Մի վախենա, աչքս չար չի:

Հերիքնազը թողեց թեյի սեղանը, գնաց կթոցի հե-
տեվից, իսկ Ստեփանը վաղեց կովի մոտ:

Բաղդո բիձեն սպասեց, սպասեց, տեսավ վոր ու-
չանում են՝ ինքն իր համար մի բաժակ թեյ լցրեց ու
սկսեց կծովի խմել պնակի միջից, փուքսի նման փչելով
և ալեկոծելով պնակի միջի տաք թեյը:

— Ես ինչի՞ եսքան ուշացան...

Մտմտաց նա ու դատարկ բաժակը գրեց սեղանին,
աչքերը դարձնելով նրանց գնացած կողմը:

— Սեփա՛ն... Հերիքնա՛զ...

Պատասխան չեղավ:

Հո՛, հո՛... խելո՛ք կաց...

Լավեց Ստեփանի ձայնը:

— Սատկե՛ս դու, հա՛, ի՞նչ ես գժվել, ա՛յ կով...

Բաղդո՛...

Բաղդո բիձեն անհանդուստացած վեր կացավ, վոր
տեսնի, ինչ է պետահել: Մի քանի քայլ հաղիվ եր ա-
րել, վոր կթոցը ձեռքին, աչքերից արցունք կաթեցնե-
լով, դեմն յելավ Հերիքնազը:

— Հը, ի՞նչ ե...

— Ինչ պիտի լինի, ջանիդ սաղություն:

Բաղդո բիձեն բան չհասկանալով, զարմացած կանգ
ստավ...

— Ի՞նչ ես խոսում ա՛յ կնիկ, բան չեմ հասկանում:

— Ի՞նչ պիտի հասկանաս. կովը հիվանդացել է,
կաթից կտրվել...

— Հայրի՛կ ջան շատ ե կատարել, — մեջ մտավ Ստե-

փանը, վոր կովի կապը ձեռքին, մյուս ձեռքումն ել ճի-
պոտը՝ կանգնել եր կովի մոտ, — չի թողնում կթենք,
վոր բարկանում ենք վրան, ավելի յե գժվում, մայրիկը
վոտին խփեց, վոր հանգիստ կանգնի, գլուխը սկսեց
թափահարել, պոչով խփեց մայրիկին... ինչպես գժվել
է, ճիպոտով մի լավ հասցրի՝ խելոքացավ:

— Կացե՛ք, կացե՛ք, կովին խփե՞լ եք...

— Բա աչքն ել չենք հանել. թե Ստեփանը մի կողմ
չփախչեր, պողահարելու յեր... ել են կովը չի, ենպես
է փչացել:

— Դե ել ինչո՞ւ եք դեռ ու դեն ընկնում, եղա վոչ
կա:

— Ի՞նչն է եդ:

— Եղա՛, ե՛դ: Հիմա հասկանում եմ, ինչի յե կաթը
պակասեցրել... նեղացել է, խռովել...

— Հա՛, հա՛, հա՛... յես ել վախեցա, թե ինչ բան
է...

— Կո՞վն է խռովել:

— Հա, հենց կովը: Բա անասունին, վոր ծեծես,
վրան զոռաս, հայհոյես, նա ել քեզ կաթ կտա...

— Ե՛յ, ա՛յ մարդ, ինչե՞ր ես դուրս տալիս:

— Բան եմ ասում, խռովել ա... հաստատ...

— Կթոցը դեռ տուր, դուք ել չքացեք... մոտ չը-
գաք:

— Բաներ կասես, վոր յեփած հավն ել ծիծաղի:
Կովն ել խռովի, մարդ է, ի՞նչ ե...

— Մարդուց ել խռովկան ե... դեսը տուր կթոցը:
Նա կնոջ ձեռքից վերցրեց այն:

— Գնացեք ու չերեաք:

Հերիքնազն ու Ստեփանը գնացին, ու քիչ հեռանա-
լով ծառերի արանքից սկսեցին հետաքրքրությամբ զի-
տել:

Բաղդո բիձեն բժի-բժի անելով մոտ գնաց, շոյեց
մեջքը, գլուխը, մի կտոր քարազ ձեռքին բռնած դեմ
արեց կովին. կովը հաճույքով իր փչիչոտ լեզվով լիզեց
քարազը, հոտուտեց Բաղդոյին, ու յերբ Բաղդոն աղը
ձեռքին գնաց դեպի գոմը, կովը մի անգամ բառաչեց
ու գնաց նրա հետևից:

Ծածկի տակից Բաղդոն հանեց թեփից պատրաստած լափան ու դուլլով դրեց նրա առաջ, ապա ձեռքը մեջքին սպասեց մինչև վերջացնի, ու հանգիստ քիթի տակ մի յերգ մրմուռով, վերցրեց կթոցն ու պպղեց կովի մոտ: Փրփրալին, առատությամբ սկսեց հոսել կաթը պտուկներից, այնպիսի անուշ վշտոցով, վոր Բաղդոն ուրախությունից քիչ եր մնում քրքջար ու ձայն տար կնկանը: Բայց վախենալով, վոր կովը կխրտնի, իրեն գսպեց:

Փրփրալից կաթով լիք կթոցը մի կողմ դրեց, փաղաքչեց, համբուրեց կովի աչքերը, կապեց սյանը, առաջը խոտ ածեծ ու կանչեց.

— Հերիքնա՛ղ...

Հերիքնազն ու Ստեփանը վազելով մոտեցան.

— Հը՛, ի՛նչ եյի ասում...

Հերիքնազը տեսնելով լիքը կթոցը, աչքերին չեր հավատում և ուրախանալով, վոր կովը հիվանդ չի, ծիծաղելով չանչեց նրա կողմը:

— Գրո՛ղը յերեսիդ... ինչպե՛ս վախեցրիր:

— Խռովել եր: Պետք ե հասկանաս, վոր անասունին չեն վիրավորի, չեն խփի, թե չե նա ել կխռովի ու քեզ անկաթ կթողնի...

— Գրո՛ղը տանի քեզ, ա՛յ կով... տեսար, խռովել ել գիտի, եդ ել չեյի իմացել...

Յեվ նա ծիծաղն ու արցունքը խառնելով իրար, գրկեց կովի վիզը, շոյեց գլուխն ու համբուրեց նրա գեղեցիկ աչքերը:

ՏԱՐՄԵՐԻ ԿՈՒՎԸ

Մորեխ, յերեվի բոլորդ ել տեսել եք, նույնիսկ բռնել, վոտերը կտրել ու բաց թողել:

Նրանք սարսափելի չեն, յերբ մեկ-մեկ են լինում կամ զույգ-զույգ: Սակայն ահուելի յեն դառնում, յերբ խուժում են միլիոններով: Նրանք վոչնչացնում են կանաչ մարգագետինները, արտ, այգի, խժռում են ամբողջ բուսականությունը, և նրանց անցած ուղին դառնում ե բուսականությունից զրկված մի ամայի անպատ:

Այդ աղետին առաջ հաճախ յենթակա յեր մեր յերկիրը: Իրանից, Մուղանի անապատներից նրանք խուժում եյին մեր կողմերը:

Մորեխն ամպի նման ծածկում եր պայծառ արևի յերեսը:

Այդ փոքրիկ խժռողներն այնպիսի ահ ու սարսափ եյին տարածում չորս կողմ, վոր կարծես թե մորեխներ չլինեյին յեկողներն, այլ, միլիոնավոր թունավոր ոձերի խմբեր...

Մեր յերկիրը մինչև խորհրդայնացումը հաճախ յենթակա յեր այդ աղետին: Այժմ մորեխը չի համարձակվում յերևալ խորհրդային յերկնակամարում, նրանց դեմ պայքարելու համար գործում են պողպատյա հսկա «տարմերը»—ողանավերը, թունավոր նյութերով վոչնչացնելով նրանց:

Իսկ առաջ աղոթում եյին, վոր աստված իրենցից հեռացնի այդ չարիքն ու սովի չմատնի յերկիրը, բայց աղոթքը չեր ոգնում...

Տարմը սարյակի մեծության, սուր կտուցով, դարչնագույն, թևերի ծայրերը սպիտակ գույնով մի թռչուն է: Վո՞րտեղ են ապրում նրանք, չգիտեմ: Տարմը մորեխի թշնամի յե: Թեյեվ շատ աղոտ կերպով էմ հիշում, բայց պատմեմ մորեխի դալը և տարմի կռիվը նրանց հետ:

Ամռան տաք օրերից մեկն էր. թուփը արդեն հասել էր:

Մորեղբայրս Արամը ծառի վրա յեր: Յածում թթի շորի ծայրերից բռնած՝ սպասում էյինք մուրճի հարվածին:

Մի յերկու ճյուղ հագիվ թափ տվեց, յերբ մի խուլ սղմուկ լավեց: Առաջ ուշադրություն չդարձրինք, բայց աղմուկը քանի գնում ուժեղանում ու տարածվում էր:

- Ես ինչ է պատահել:
- Իրարանցում է:
- Հլա կացեք...

Հանկարծ կարծես մի ամպ յեկավ պատեց արևի պայծառ յերեսը... Պապիկը վախեցած նայեց յերկրներին... Տատիկը, մայրիկս ու մյուսները հանկարծ բաց թողին թթի շորի ծայրերը և սարսափած աչքերով նայում էյին յերկնքին: Յես չեյի հասկանում, թե ինչ պատահեց: Մի հսկա սավեր ընկավ մեր գյուղի վրա... **Ծները սկսեցին վռոնալ... Ի՞նչ պատահեց...**

Ինչպես պղտոր հեղեղ, հոսում էր մորեխների բանակը: Ահա կանգ առան գյուղի գլխին և կարծես վերևից դիտում էյին ու տեղ նշում, վոր վրա տան:

- Կորա՞նք...
- Տեր, դու փրկիր... Ես ինչ գուլում յեկավ դըլխրներին: Վո՞ր մեղքի համար ես պատժում տեր— աղոթում եր տատիկը:

— Կարծես անցնում են...

— Ձե, իջնում են... Ել փրկություն չկա:

Ինչպես բազեն վորսի վրա յե ընկնում, այնպես ցած թափվեցին մորեխների լեզետները և ընկան արտերի վրա: Քիչ անց կանաչ արտից վոչինչ չմնաց:

Հուսահատությունը պատել էր ամենքին, անզորանոզնական՝ աստծուն էյին աղոթում: Աստվածն անտարբեր «նայում» էր, իսկ մորեխը վոչնչացնում էր արտերը— գյուղացու հույսն ու ապավենը...

Լաց, անեծք, տրտունջ, աղոթք խառնվել էյին իրար, և հուսահատ՝ կուրծքներն էյին ծեծում ու վախտալիս գլխներին...

Ի՞նչ պատահեց... Ինչո՞ւ հանկարծ լուեցին... Մի քանի վայրկյան տիրեց այդ լուությունն ու առաջ մի ցած ձայն, ապա մի ուրիշը, նրանց միացան շատերը և պայթեց ցնծագին ճիչը:

- Յեկա՞ն...
- Տա՛րմ... տա՛րմը, — ամբողջ գյուղը մի բերան դարձած ճչում էր:
- Տա՛րմ... տա՛րմ...

Յնծալից աղաղակներին խառնվեցին ուրախության արցունքները...

Այդ փոքրիկ թևավոր հերոսներն առանց ժամանակ կորցնելու, կարծես մեկը հեռախոսով հաղորդել էր նրանց վոր հասնեն, գրոհեցին, պատռեցին անթափանց մորեխի քողը և սկսվեց մի անասելի պայքար...

Մորեխները թողին արտը, վեր բարձրացան, աջ, ձախ, առաջ, յետ. ուր շարժվում էյին՝ հանդիպում էյին տարմերի սուր կտուցներին: Գետինը ծածկվեց մորեխների դիակներով: Կռիվը ճակատագրական էր: Կոտորում էյին թշնամուն, ապա արնաթաթախ կտուցներով իրենց ջուրն էյին նետում և մաքրում թևերը, արնոտ կտուցները. թուփ ուտում ու կրկին սրընթաց հարձակման դիմում, փոխարինելու իրենց հոգնած ընկերներին:

Կռիվն անխնա յեր, վերևից թթի նման ցած էյին թափվում մորեխների դիակները: Նոսրանում էր թանձրը քողը, արևը ուրախ ժպտաց այդ աղետաբեր ամպի

յետեից: Գետինը ծածկվեց զխակներով... վեց ժամվա
անդուլ գրոհից հոգնած տարմն իր գործը վերջացրեց և
հարձակվեց թթենիների վրա...

— Յերեսե՛ք, մնաք բարո՛վ ասեք թթին, — ձայնեց
պապիկս:

— Հալա՛լ, հալա՛լ դրանց, — կանչում էյին ար-
ցունքների միջից հուզված կանայք:

Վո՞րտեղից յեկան, ո՞ւր գնացին այդ չքնաղ թըւ-
չունները, չգիտեմ: Բայց տարիներ են անցել, իսկ յես
նրանց յերբեք չեմ մոռանում:

«ԳԱՐՆԱՆ ԹԱՆԻԾԸ»

Գարունն ել անցավ, ամառն ել:

Յորենի ու գարու արտերը անհրապույր էյին դա-
ռել, սուր ցողունները փշերի նման ցցվել էյին ճաքճք-
ված արտերում:

Գիշերները ցուրտ էր:

Սարյակը, մանգաղաթևը, ագռավն ու կաչաղակը,
բուն ու պպուն, բոլոր թռչունները ճուտերին մեծացը-
րել, բաց էյին թողել:

Արագիլը հպարտ, կանգնած ճահճուտում մի վոտի
վրա, անմիտ աչքերով յերկնքին էր նայում:

Կռուկներն արդեն սկսել էյին չվել տաք յերկրներ:

Բոլոր թռչունները խուճապի մեջ են, անհանգիստ
գետ ու դեն են թռչկոտում, խմբվում մի տեղ, խլացու-
ցիչ ձայներով ճուլոզում, ամեն մեկն աշխատո՛ւմ է խլա-
ցընել մյուսին, վիճում են, ճչում ամբողջ ձայնով:

— Շո՛ւտ է...

Ճչում է մեկը:

— Ո՛ւչ է, ո՛ւչ է...

Կանչում է մյուսը:

— Շո՛ւտ է, շո՛ւտ է, շո՛ւտ է...

— Վո՛չ, վո՛չ, վո՛չ...

— Ո՛ւչ է, ո՛ւչ է...

Յեվ մի յեղրակացու թյան չգալով, թափահարում
են թևերը և ցրվո՛ւմ ազմուկով:

Արևը մայր մտնելուց առաջ՝ մեծ ու փոքր մանդա-
ղաթեվերն իրար խառնված՝ սրբնթած պատուում են ո-
ղը՝ իրենց սուր, սև մանգաղաձև թևերով և զիլ ճչում
ու անցնում են:

Ել հասնող պտուղ չկա, մեծացող ձագ չկա, բոլոր

պտուղները պոկվել են իրենց թփերից, ճյուղերից և շուկա գնացել, իսկ թռչնիկները բներից թռել, խառնվել են մեծերին, ծնողները կորցրել և լցրել ուր անուշ ճրուփոլյունով:

Աշունը գեղնում է:

Մարդիկ ձմեռվա պաշար են տեսնում: Ղանթարի հրապարակում վխտում են մարդիկ՝ սեխի, ձմերուկի, սոխի ու գետնախնձորի դեղերի մեջ. շարան-շարան գարսված են խաղողի, դեղձի, տանձի ու ամեն տեսակ բանջարեղենի կողովներն ու կույտեր: Մարդիկ իրար են անցել, գորգոռում են, սակարկում: Մայրակաների մոտ յեզներն անտարբեր նստած վորոճում են: Կյանքը յեռում է:

Մրջյուններն էլ տենդոտ՝ պաշար են կրում բները. ազոավը, կաչաղակը ընկույզ են փախցնում, ճնճղուկները դես ու դեն են ընկել, կարծես վոչ մի հոգս չունեն, բայց նրանք էլ պարապ չեն, նրանք էլ դիտեն, վոր ձմեռն է վրա հասնում:


Արդեն սկսվել է տարագնաց թռչունների չուն, բրնազդորեն հասկանալով մոտալուտ ձմեռը, յերամներով գնում են տաք յերկրներ:

Արևը դեռ չեր ծագել: Արտուտը թպրտաց, վեր սրլացավ և իսկույն իջավ տխուր:

Մասիսի գազաթը վոսկեղոծվեց, կարծես թե մեկը լիքը կաթսայով հալած վոսկի լցրեց նրա ճերմակած գլխին:

Լորերը՝ չհնձված դեղնած խոտերի մեջ թաղնված, հանկարծ աղմուկով թևին են տալիս, գնդակի պես վեր սլանում, կլտում անուշ-անուշ և հարյուր քայլի վրա իջնում ու խոտերի մեջ կորչո՞ւմ մարդու աչքերից:

Տատրակներն ահագին խմբերով սրընթած հասնում են առունների յեզրը բուսած ուռիներին և մի թեթև ճայնից լեղապատառ՝ վեր թռչում, ուժեղ թևերով ճեղքելով սղը, մի ուրիշ ծառ գտնում:



Հրացանը պատրաստ բռնած, առանց շտապելու, մինչև ծնկները դեղնած խոտերի միջով, զգուշությամբ մեկը հետևում է շանը: Շունը ամբողջապես կորել է խոտերի մեջ, յերբեմն միայն բարձրացնում է գլուխը, մի վայրկյան կանգ առնում ու հեռ նայում, կարծես սառագելու, հետևից գալի՞ս են, թե վոչ, ու իսկույն խոնար-

Հում գլուխը և հոտոտելով առաջ գնում, պատուելով
խոտերի կուրծքը:

Շունն հանկարծ կանգ առավ, խլշտրեց ականջներն
ու գոգաց ամբողջ մանրմնով, չհամարձակվելով առաջ
անցնել:

—Պի՛լ... .

Հավեց վորսորդի հրամանը, շունը վրա պրծավ: Մի
բան գնդակի պես դուրս սլացավ խոտերի միջից, կլտաց
ու վեր սլացավ, բայց հրացանի ձայնի հետ, յերկինք
նետած քարի պես ծանր-անձայն նորից վայր ընկավ՝
խոտերի մեջ:

Շունն ելի կանգ առավ, կրկին պայթեց հրացանը և
այն մեկն ել լուռ ընկավ:

Շունը հոտոտելով գտավ յերկուսին ել և առամենե-
րով բռնած թրպրտացող թռչունները հասցրեց վորսոր-
դին, վոր ժպտալով առավ շան բերանից և այդպես կի-
սակենդան նետեց պայուսակը:

Ամբողջ օրն այս ու այն կողմ հրացանի խուլ ձայ-
ներ ելին լավում, և ամեն անգամ դեպի տաք յերկիր գը-
նացող յերամից մի տատրակ, կամ մի լորիկ դիտա-
պատ գետին եր գլորվում:

Վորսորդ Արգարի տղա Համոն՝ յերկու կենդանի
լոր ուներ, մի օր՝ հայրը վորսից վերադառնալիս տուն
բերեց: Մեկի թեփն եր վիրավոր, իսկ մյուսի վրա վոչ
մի հետք չկար, յերևի վախից եր ընկել:

Համոյի ուրախությանը չափ չկար: Յերկու կենդա-
նի լոր, այնպես կլորիկ, գեղեցիկ: Հայրը տախտակից
վանդակ շինեց և լորիկներին բանտարկեցին այդ նեղ
վանդակում: Կանեփի կուտ, ցորնի հատիկ ելին տալիս.
Չուրը միշտ անպակաս եր: Բայց լորիկները տխուր ելին,
չեյին յերգում, չեյին ուտում. այդ բանը Համոյին շատ
եր անհանգստացնում: «Բա վոր չուտեն-չուտեն ու սատ-
կե՞ն...»:

Հայրը հանգստացրեց, վոր վոչինչ, կընտելանան,
կուտեն:

Պմբողջ օրն անգաղար դես ու դեն ելին թռչկո-

տում, խփվում վանդակի պատերին, բայց փրկություն
չկար, վանդակն ամուր եր:

Մի քանի օր՝ գլխիկներն այնքան բաղխեցին վանդա-
կի չոր տախտակներին, վոր գլխի փետուրները թափվե-
ցին, կաշին բացվեց:

Որեր անցան...

Նրանք հաշտվեցին իրենց դրության հետ, վերջնա-
կանապես կորցրին ազատվելու հույսը, կամաց-կամաց
հանգստացան:

Մյուսի թեփն ել լավացավ:

Առավոտները վաղ՝ Համոն դես անկողնում լսում եր
լորերի տխուր կլտոցը, ապա լսում եր, թե ինչպես նը-
բանք մի քանի անգամ իրար հետևից խփվում ելին
վանդակի պատերին ու ելի իսկույն խեղձացած, մի մե-
լամաղձոտ կլտոց արձակելով-լուում:

Բանտն այնպես խո՛րթ եր նրանց ազատասեր հո-
գուն, այնպես դժբա՛խտ ելին այդ յերկու փոքրիկ կա-
լանավորները:

Նրանք անհանգիստ ելին: Ախր չվելու ժամանակ ե
... ձմեռ ե գալիս... . նրանց ընկերներն արդեն ձանա-
պարհին են... . Նրանք թեև լավ չգիտեյին, թե ինչ բան
ե ձմեռը, բայց բնազդաբար վախենում ելին:

Բացի Համոյի լորերից՝ բոլոր տարազնաց թռչուն-
ները չվել ելին:

Ծառերից տերևները թափվել, բարակ անձրև եր
մաղում:

Համոն լորերին սենյակը տարավ: Մի քանի օր սեն-
յակում ապրելուց հետո, Համոյի հայրը դուռ ու պա-
տուհան փակեց ու լորերին դուրս թողեց վանդակից:
Այդ բանը, ինչպես յերևաց, նրանց շատ դուր յեկավ:
Ազատվելով բանտից, ուրախացած դես ու դեն թռան,
խփվեցին պատուհանի ապակիներին, ընկան, ելի բարձ-
րացան, բայց տեսնելով, վոր սա ել մի քիչ ավելի մեծ
բանտ ե, տխուր մտան թախտի տակ և կուչ յեկան հողե
հատակի վրա:

Որը մի քանի անգամ դուրս ելին թողնում, նրանք

եւ քանդում էյին հատակը, թավարվում, հող ածում վրաները, թափ տալիս իրենց, դես ու գեն թռչկոտում, իսկ պատուհանի յետևից՝ ակնդետ, ազահ աչքերով հետևում եր նրանց՝ կատուն, շրթունքները լպստելով «միտո՛ւ» անում խեղճ-խեղճ:

Կատունները շատ են սիրում փոքրիկ թռչուններին. Համոն այդ լավ գիտեր և շատ զգուշ էր:

Լորիկներն ապրում էյին Համոյենց հետ՝ սենյակում, այնքան էյին վարժվել, վոր եւ վանդակ չէյին դնում:

Ձյունը հարվեց, արևը տաքացավ, և դարունը յեկավ:

Լորերին կրկին վանդակ դրին ու դուրս բերին բազիլ, մի բարձր տեղ կախեցին, վոր կատուն չգրկուի:

Թ՛վում եր, թե լորերը հաշտվել են իրենց դրուժյան հետ. սկսեցին յերգել, կարոտով նայել դուրսը ծաղկող բնությանը:

Համոն ուրախ եր: Նա կարծում եր, թե լորերն ուրախությունից են յերգում և չեր հասկանում, վոր ազատության, ծաղկող դարնան կարոտն եր նրանց կուրծքը լցրել թախծով և այդ թախիժն եր, վոր այդպես արխուր կլտում եր նրանց կրծքի տակ:

Յե՛վ լորերը հանկարծ դադրեցին յերգելուց. վոչ ուտում էյին, վոչ խմում:

Սկսվեց մի կատաղի պայքար, համառ կռիվ ազատության համար, նրանք իրենց փոքրիկ մարմիններով ծեծում էյին վանդակի պատերը, բայց՝ ապարդյուն, վանդակն ամուր եր: Այնքան ծեծեցին, վոր յերեկոյան դեմ մեկի գլխից արյուն եր գալիս, իսկ առավոտյան, յերբ Համոն ըստ սովորության մոտեցավ ջուրը փոխելու, տեսավ, վոր լորերից մեկը կուշ է յեկել անկյունում, թևերը կախել և անշարժ մի կետի յե նայում:

Համոն վախեցած կանչեց հորը: Նա լուռ կանգնեց վանդակի մոտ և գլուխը շարժելով, տխուր-տխուր ասաց.

— Կուրացել է:

Առաջ Համոն չհասկացավ, ի՞նչպես թե, թռչունն եւ Կուրանա՞, բայց յերբ մոտիկից դիտեց թռչունի աչքերը՝ եւ կասկած չմնաց, սկսեց բարձրաձայն լալ:

Արևը դեռ մայր չմտած՝ լորիկն անչնչացած ընկել եր հատակին:

Մյուս լորն եւ վոչ մի անգամ չերգեց: Գարունն լցրե՛լ եր նրա սիրտը թախիժով...

Մի որ հայրն ասաց Համոյին.

— Համո ջան, մեղք է, վանդակում վոր մնա՝ սա յել կսատկի, արի տանենք հանդն ու բաց թողնենք:

Համոն լալով համոզվեց, վոր այդպես ավելի լավ կլինի:

Վանդակը վերցրին ու դուրս յեկան տնից:

Բաց-կանաչ դաշտում վանդակը դրին խոտերի մեջ, տունակը բաց արին ու մի քիչ հեռու կանգնած նայում էյին:

Քիչ անց՝ լորիկը դուրս յեկավ վանդակից, մի քանի վայրկյան մնաց կանգնած դուռն վրա, նայեց շուրջը, տեսավ ծանոթ-հարազատ դաշտերը, ցորենի, դարու կանաչած արտերը, թափահարեց թե՛վերն ու գնդակի նման վեր սլացավ: Վերջին անգամ Համոն լսեց իր լորիկի կլտոցը, վոր եւ այնպես թախծազին չհնչեց, ինչպես վանդակում:

— Հայրիկ, հիմա նա կգանի՞ իր ընկերներին:

— Կգանի:

Համոն ուրախ բացականչեց.

— Հայրիկ, եւ լոր չբերես:

— Լավ, լավ, տղաս, եւ չե՛մ բերի... վանդակն առ՝ գնանք:

— Ձե, չե, հայրիկ, պետք չե վանդակը, թող այստեղ մնա... եւ լոր չբերե՛ս:

ՄԵՐ ԴԻՐԵԿՏՈՐԻ ՔՐՈՋ ՏՂԱՆ

(Հիշողութիւններ հին դպրոցից)

Յես շատ փոքրիկ եյի, յերբ հայրս մեռավ: Մեծ յեղբայրս կոչկակարի մօտ աչկերս եր, իսկ փոքրիկ քույրս նոր-նոր սկսել եր քայլել ու թոթովել:

Մենք չքավոր եյինք: Մայրս հազիվ եր կարողանում ուրիշների համար լվացք անելով, վերմակ, ներքենակ կարելով, մի կտոր հաց աշխատել:

Ինձանից փոքրերը դպրոց եյին գնում: Արդեն իննը տարեկան եյի. յես ել եյի ուզում դպրոց գնալ: Շարունակ խնդրում եյի մորս, վոր ինձ ել դպրոց ուղարկի, բայց խեղճ մայրս ի՛նչ աներ... Այն ժամանակ ուսումը ձրի չեր, վորտեղի՞ց ուսման համար փող գտներ, դեռ դրքեր, տետրակներ և ուրիշ բաներ ել եյին հարկավոր...

Մեր հարեանի աղայից տառերը սովորել եյի և այդ տառերն իրար կապելով կարդում եյի: Յերբ տառերից բառեր եյին ստացվում, ուրախութիւնից ճչում եյի և թռչկոտում:

Մայրս շատ մտահոգված եր, վոր յես ել դպրոց գլնամ, բայց ճար չկար: Վերջապես յերկար մտածելուց հետո, վճուեց զխմել իր յեղբոր աղայի ոգնութեանը: Նա խոստացել եր ուսման վարձը տալ և ամիսը 1 ուրբի 50 կոպեկ ել՝ դրենական պիտույքների համար: Ուրախութեանս չափ չկար, յերբ մայրս տուն գալով, հայտնեց այդ ցանկալի լուրը, ավելացնելով, վոր, յեթե լավ չըսովորեմ՝ խոստումը յես կվերցնի:

Նյութական հաջողութիւնը գործի միմիայն կեսն ե: Դպրոց մտնելն ել հեշտ բան չեր չքավորների յերեխաների համար:

Շատ դես ու դեն ընկնելուց հետո, մորս հաջողութեան ինձ ընդունել տալ նավթուղի քաղաքային քառամյա դպրոցը:

Առանց վերարկույի, կրկնակոշիկների ու ձեռնոցների, անձրեկի ձյունի տակ, ցեխերի միջով, յերկու կիլոմետր տարածութիւն եյի կտրում դպրոց հասնելու համար:

Ձմռան առաջին ցրտերի հետ, ձեռներս ու վոտներս ուռչում եյին, կարմրում և անասելի ցավեր պատճառում: Մորթը ճաքճքում եր ու տեղ-տեղ բացվում արնագույն մարմինս: Յավից լալիս եյի, վախենում եյի ջրի դիպցնել: Յեթե ինձ մնար, յերբեք առավոտները չեյի լվացվի, բայց մայրս ստիպում եր և ինքն զգուշութեամբ լվանում եր յերեսս, ձեռներս. յես ցավից ճըչում եյի ու վոտներս դետին խփում:

Մեր դպրոցը շատ անհրապույր եր, մռայլ, իսկ մեր դիրեկտորին, վոչ վոք չեր սիրում. բոլորը վախենում եյին նրանից, միշտ բարկացած եր:

Կարճահասակ, հավի կտրած թւի նման շրթունքների վրա կախ բեխեր ուներ, վորի ամեն մի մաղջ կոչկակարի մազի ասեղ լիներ կարծես: Կարճ-կտր միբուրքով, ճակատը նեղ, գլխի ալեխառն մազերը կարճ խուզած, կարծես վոզնի լիներ: Դեմքը դեր եր ու կարմիր: Փոքրիկ աչքերը, հաստ, սև հոնքերի տակից, շարժվում եյին անհանգիստ: Փորն այնքան մեծ եր, վոք ժիլետի մեջ չեր տեղավորվում, և կանգնած տեղը, յերբ խորը շունչ եր քաչում, մեկ ել տեսար կոճակներից մեկը գուրս թռավ, կամ ողակը պայթեց: Համազգեստի սձիքը միշտ կեղտոտ եր, քրտինքից յուզոտած: Շատ փնթի մարդ եր: Յերբ դասարան եր մտնում, դռան մեջ առաջ փորն եր յերևում, հետո աստիճանաբար ինքը:

Հենց առաջին որվանից յես չսիրեցի նրան, սաստիկ վախենում եյի և աշխատում եյի վորքան կարելի յե քիչ յերևալ նրա աչքին:

Դիրեկտորից ավելի բոլորն ատում եյին ոռուսացի լեզվի ուսուցչին: Բարձրահասակ ու կռացած, պենանեն թեք կախված քթի վրա, զարմանում եյինք ինչպե՞ս չի

ընկնում: Նայելուց վոչ թե ակնոցն եր բարձրացնում, այլ գլուխը:

Դիրեկտորի աջ թեկն եր նա. դպրոցում ինչ պատահում եր, նա յեր գեկուցում դիրեկտորին: Մեծում եր, հայհոյում, առանց ճաշի թողնում, մութ սենյակում նստեցնում: Բարևում եյինք, չեք պատասխանում, իբր թե չի տեսնում, չեյինք բարևում, ականջներիցս այնպես եր քաշում, վոր քիչ եր մնում պոկի: Թե ուսուցիչները, թե մենք, նրանից վախենում եյինք, վոչ վաք նրան չեք սիրում, իսկի նրա հոգն ել չեք, միայն թե դիրեկտորի աչքը վրան քաղցր լիներ: Թվարանության ուսուցչին բոլորս սիրում եյինք, այնքան բարի յեր, մեկին չու չեք ասում, միշտ ժպիտը դեմքին, չեք դոռում, չեք ծեծում: Նրա դասերին՝ յեթե ճանճը թուչեք, նրա բարակ տղոցը կլսվեր: Ամեն կերպ աշխատում եյինք թվարանության ուսուցչին չվրդովել:

Ռուսաց լեզվի ուսուցիչը չեք սիրում նրան. միշտ բամբասում եր, գանդատվում եր դիրեկտորին՝ Ակակի Բազրատիոնովիչից:

Յերկրորդ տարին եր, ինչ այդ դպրոցումն եյի:

Ձմեռային մի հրաշալի որ եր: Ձյունը թզաչափ նստել եր և դեռ չարունակվում եր թափվել: Յուրտ չեք: Ձյան փաթիլները խաղեր եյին անում ողի մեջ, մեղմորեն շոյում դեմքներս ու հարվում:

Դասերից հետո աղաները մնացին ձնագնդի խաղալու: Յես ել մնացի: Յես ել շատ կուզեյի մասնակցել, բայց յերը հիչեցի, վոր ձեռներս մոմոալու յեն և ցավից պետք ե մղկտան, վորոչեցի գրկվել այդ հաճույքից և հեռվից դիտել ընկերներիս խաղը:

Տղաները յերկու հակառակ բանակների բաժանվեցին ու սկսեցին կովի համար ձնագնդիներ պատրաստել:

Շուտով խաղն սկսվեց:

Ձյունի սպիտակ գնդակները թռչկոտում եյին ողի մեջ, կաշում սրա նրա մեջքին, կրծքին, գլխին: Չնա-

գընդիների տարափն այնքան հորդ եր, վոր ողի մեջ իրար եյին բախվում և վշուր-վշուր թափվում ցած:

Սաղի ամենատաք միջոցին, հանկարծ մի սոսկալի ճիչ հասավ ականջիս:

Սաղացողներից մեկը վա՛յ կանչելով դուրս յեկավ շարքերից: Նա մի ձեռքով բռնել եր աջ աչքը: Յես մոտ վազեցի. մատների արանքից արյուն յերևաց:

— Ո՞վ խփեց:

— Չգիտեմ... Քար կար մեջը:

— Բաց տեսնեմ:

— Ձե, չե, վախենում եմ:

Նա գնաց դեպի ուսուցչանոցը, յես ել նրա յետևից:

Այդ իրարանցման, աղմուկի վրա ուսուցչանոցից դուրս յեկավ ուսեերենի ուսուցիչը: Իմանալով բանն ինչումն ե, ներս մտավ և քիչ անց դուրս յեկան ուսուցիչները և դիրեկտորը:

— Ի՞նչ ե պատահել:

— Աչքին քարով են տվել:

— Ո՞վ:

— Չգիտենք:

Ուսուցիչներից մի քանիսը բակ իջան:

Ակակի Բազրատիոնովիչն ուժով հեռացրեց տղայի ձեռքն աչքից:

Աչքը փակ եր, ուռած, արյունը կաթում եր:

— Իսկույն հիվանդանոց տանել, — կարդալերեց դիրեկտորը:

— Դոները փակել, վոչ վոքի բակից դուրս չթողնել:

Բոլորս սրտատրոփ սպասում եյինք...

— Ո՞վ ե քար դրել ձնագնդի մեջ, — իրեն զսպելով, խուպոտ ձայնով գոչեց դիրեկտորը:

Բոլորը լուռ եյին:

— Ասացեք այդ սրիկայի անունը, թե չե բոլորդ ել կարցեր կնստեք...

— Մենք չգիտենք, պարոն դիրեկտոր:

— Չգիտե՞ք... Ձե՞ք ասում... Լավ... Բոլորին ել

կարցեր, առանց ճաշի թողնել, մինչև հանցավորի ա-
նունը չասեն:

Ռուսերենի ուսուցիչն աստիճաններից արագ ցած
իջավ:

Այդ բուպեյին, ձեռներով ճանապարհ բանալով, ա-
ռաջ յեկավ մի գեր ու կլոր տղա: Դա դիրեկտորի քրոջ
տղան էր: Նա համարձակ կանգնեց դիրեկտորի առաջ և
ինձ վրա մատնացույց անելով, ասաց.

— Սա յեր, պարոն դիրեկտոր... Յես տեսա...
Սա յեր:

Ապշած՝ վոչինչ չկարողացա ասել, այնքան անսպա-
սելի յեր ինձ համար այդ զրպարտությունը: Դա այն
տղան էր, վոր յերկու ամիս առաջ գրչահատու գողացիւ
էր, բռնվել էր, և դպրոցից դուրս կանեյին, յեթե դի-
րեկտորի քրոջ տղան չլինէր: Այդ որից թշնամացել էր
ինձ հետ և վոխ էր պահում:

Դիրեկտորն իջավ պատշգամբից:

— Մոտ արի:

Յես դողալով մոտեցա և կանգնեցի նրա առաջ:

— Դո՞ւ յես խփել...

— Վոչ, յերզվում եմ... Սուտ ե՛ խոսում, յես ձնա-
գնդի չեմ խաղացել, հարցրեք ում ուզում եք...

— Սո՛ւտ ե, սո՛ւտ ե, դա՛ յեր, յես տեսա, մի կլոր
քար էր:

— Ձե՞ս խաղացել: Հասկա ինչպե՞ս է քարը աչքին
դիպել:

— Յես չգիտեմ... Յես չեմ խաղացել... Ինչո՞ւ յես
ստում... դող:

— Ձա՛ յնդ:


Ատամների միջից մոնչաց դիրեկտորը և մի քայլ
արեց դեպի ինձ:

— Պարոն դիրեկտոր, նա չեր խաղում... Դա ստում
է, վրեժ է լուծում:

Լսվեցին մի քանի անվստահ, յերկչոտ ձայներ:

— Լու՛ր... Յույց տուր ձեռներդ:

Յես պարզեցի յերկու կարմրած, ցրտահար ձեռնե-
րըս: Նա մի վայրկյան լուռ նայեց ձեռներդիս, ջղաձգա-



բար բարձրացրեց բուռնցքը և բուռնցքի միջից դուրս
ցցված մատով ամուր հասցրեց զթիս...

Արյունը շուտաց զթիցս: Մի ապտակ ել հասցրեց և
բարկությունից փուքսի նման փչելով և զթի տակ
մըթմըթալով, աստիճաններից վեր բարձրացավ: Ուսու-
ցիչները հետևեցին նրան, բացի Ակակի Բազրատիոնո-
վիչից:

— Հանգստացի՛ր, — սասց նա: Տղա՛յք, ճիշտն ա-
սացեք, սա մեղավո՞ր ե:

— Վոչ, Ակակի Բազրատիոնովիչ, նա չէր խաղում:

— Ձե՛ր խաղում, չե՛ր խաղում, — լավեց ամեն կող-
մից:

— Հապա ինչո՞ւ թողիք, վոր անմեղ տեղը վիրա-
վորեն ձեր ընկերոջը, ինչո՞ւ չասացիք դիրեկտորին:

Բոլորը հարձակվեցին դիրեկտորի քրոջ տղայի
վրա.

— Անամո՛թ, ստախո՛ս, գո՛ղ: Վրե՞ժ ես լուծում:

— Դո՛ւք եք ստախոսն ել, անամոթն ել:

Պառկած տեղս հասավ ականջիս այդ սրիկայի
ձայնը:

Վեր ցատկեցի և վազրի նման հարձակվեցի ախոյա-
նիս վրա, բռնեցի նրա ուսից, շրջեցի, բռունցքով հաս-
ցրի կրծքին, գլխին, ուր հասնում եր, բռնեցի կոկորդն
ու սեղմեցի պատին: Նա ուղեց ոգնություն կանչել,
բայց ձայն հանել չկարողացավ: Բերանը կիսաբաց
խոխոում եր:

— Գազի՛կ...

Լսեցի Ակակի Բազրատիոնովիչի ձայնը: Այդ ձայ-
նից սթափված, բաց թողի կոկորդը:

Դիրեկտորի քրոջ տղան ազատվելով ձեռքիցս,
բարձրաձայն լալով վազեց ուսուցչանոց:

Յերկու որ անց ինձ վռնդեցին դպրոցից, դիրեկտո-
րի քրոջ տղին ծեծելուս համար:

ՆՈՐ ՏԱՐՎԱ ՆՎԵՐԸ

Ամեն տեղ նոր տարվա պատրաստություններ ելին
տեսնում, իսկ մեր տանը վռչինչ չկար: Յես պառկեցի և
աշխատում ելի շուտ քնել, վոր այդ տաղակայի գիշերը
շուտ անցնի, բայց յերկար ժամանակ չէլի կարողանում
քնել: Գլխումս մի ուրախ միտք կար: Յերկար խնդրե-
լուց հետո առաջին անգամ մայրս թույլ տվեց ինձ գնալ
մեր հարուստ ազգականի մոտ՝ շնորհավորելու նրանց
նոր տարին: Յես ինձ շատ յեջանիկ ելի գգում...

Կամաց-կամաց թմրեցի, աչքերիս առաջ սկսեցին
վխտալ լույսի կետեր. նրանք մերթ մեծանում ելին,
մերթ փոքրանում, գանազան ձևեր ելին ստանում.
Հանկարծ նրանցից մեկը կուլ եր տալիս բոլորին: Յես
ամուր ելի փակում աչքերս, վոր անհետանան, կորչեն
այդ լույսի կետերը, բայց նրանք ավելի ելին շատա-
նում, ավելի արագ պտտվում աչքերիս առաջ:

Յերբ յես զարթնեցի, արդեն լույս եր. մայրս,
քույրերս վոտքի վրա ելին:

— Ինչո՞ւ ինձ չգարթեցրիք, — դժգոհությամբ ա-
սացի յես և արագ սկսեցի հագնել նոր շորերս, վոր դեռ
իրիկվանից դրել ելին անկողնիս մոտ: Փայլեցրի կոշիկ-
ներս, չնայած վոր կոշիկակարը կարկատելուց հետո
սրբել եր, բայց ինձ թվաց, թե լավ չէլին փայլում:
Հազնված պատրաստ ելի, մայրս համբուրեց ինձ, քոյ-
րերիս և ցանկացավ յերկար, յերջանիկ օրեր: Այժմ ել
հիշում եմ. նրա շրթունքները դողում ելին, ձայնը բեկ-
բեկվում, հազիվ եր զսպում արցունքները:

— Մայրի՛կ, վա՞ղն ել նոր շորերս եմ հագնելու:

— Վա՛ղն ել, մյուս օ՛րն ել. — հանգստացրեց ինձ
մայրս:

— Մայրի՛կ, ինչո՞ւ ինձ համար գլխարկ չես առնում. տես, ինչպես հին է, սրանով գնամ, ամոթ չե՞, Գարեգինը կծիծաղի վրաս:

Մայրս վոչինչ չպատասխանեց, հանցավորի նման կախ դցեց գլուխը և աշխատեց աննկատելի կերպով արբել աչքերի մեջ դողացող արցունքի կաթիլները:

— Ի՛նչ մեծ բան է. մի գլխարկ առ, ելի:

— Առնելու յեմ... կառնեմ, դեռ լավն է...

— Հա, լա՛վն է, մի տես... ամոթ չի՞...

— Հո գլխարկով չե՛ս սենյակ մտնելու:

Մի կերպ հաշտվելով հին գլխարկիս հետ՝ դուրս յեկա տնից:

— Չուշանաս, չարություն չանես, — կանչեց մայրս յեանիցս:

— Վո՛չ, վո՛չ, մայրիկ...

Յես արդեն փողոցումն եյի, ցուրտ էր:

Ինձ թվում էր, վոր բոլորը նայում են ինձ ու ծիծաղում գլխարկիս վրա: Նոր շորերիս հետ հին գլխարկըս ինձ անտանելի յեր թվում: Յես արագացրի քայլերըս և աշխատում եյի աննկատելի անցնել: Հանկարծ հիշեցի իմ խաղընկեր Սերգոյին. նա ել միշտ պատանուաված, հին շորեր էր հագնում, վոտաբորիկ էր ման գալիս:

Յես սկսեցի ավելի արագ քայլել. ցրտից դողում էյի, ատամներս զարնվում էյին իրար, բայց շարունակում եյի գնալ: «Քիչ է մնում. կամուրջը կանցնեմ, մի քիչ տեղ ել ու նրանց տունն է, նրանք արգյոք ի՞նչ են ընծայելու ինձ... նրանք հարուստ են, չա՛տ հարուստ...»:

Կամուրջի վրա ցուրտն ավելի զգալի դարձավ. քոմին թափանցում էր մինչև վոսկորներս «...Յեթե վերարկու տան... վերարկու՞ւ, վոչ, վոչ, նոր տարուն խաղալիքներ, քաղցրեղեն են տալիս... գլխարկ ել չեն տալիս...» մտածում եյի յես:

Նորից հիշեցի գլխարկս, վորից յես վոչ մի կերպ չեյի կարողանում ազատվել: Յեթե քամին տանի, այո,

այո, ի՛նչ լավ կլինի... նորը կառնեն: Գլխարկս այնպես զրի վոր հաղիվ էր կանգնում գլխիս վրա: Անհամբեր սպասում եյի, վոր՝ ահա քամին գլխիցս կթոցնի, կձգի ջուրն ու յես կազատվեմ այդ զզվելի գլխարկից, այն ժամանակ մայրիկն ստիպված կլինի նորն առնել: Կամուրջը վերջանալու վրա յեր, բայց այն դեռ գլխիս էր: Յես մինչև անգամ փորձեցի մատով խփել, ընկալ գետին և մնաց անշարժ, մի վայրկյան սպասեցի, բայց գլխարկը համառությամբ կպել էր գեսնին... Կարմրելով՝ յես կուացա և վերցրի: Ինձ թվաց, թե բոլորը հասկացան իմ դիտավորությունը...

— Ի՞նչ էս վոտի տակ ընկնում...

Յես վախեցած բարձրացրի աչքերս: Մի բարձրահասակ պարոն էր, վոր զարնվեց ինձ և արագ հեռացավ՝ խոժոռ մի հայացք ձգելով վրաս:

Յես շարունակեցի ճանապարհս՝ կրկին մտածելով: Արգյոք ի՞նչ կընծայեն ինձ. խաղալիքնե՞ր, քաղցրեղե՞ն... բայց յեթե գլխարկ կամ վերարկու տա՛ն...

Նրանք դեռ նստած թեյ եյին խմում, յերբ յես մտա սեղանատուն:

— Ինչպես կապտե՛լ է...

— Յո՞ւրտ է:

— Ինչո՞ւ վերարկու չես հագել:

— Խե՛ղճ տղա, բոլորովին սառել է... ձեռնոցներ ինչո՞ւ չես հագել, արորի՛ր, արորի՛ր ձեռներդ:

Յես շփոթված չգիտեյի ինչ անել... մեքենաբար սկսեցի արորել ձեռներս, ժպտում եյի և այս ու այն կողմը նայում: Այտերս վառվում էյին... յուր նստած էյի:

— Այս ցրտին ինչպե՛ս կարելի յե յերեխա դուրս թողնել, չեմ հասկանում, — ասաց ազգականուհիս՝ մի բաժակ թեյ դնելով առաջս:

— Շնորհակա՛լ եմ, յես արդեն խմել եմ, — կարմրելով պատասխանեցի յես:

— Վոչինչ մեկն ել մեզ մոտ խմիր...

Նրանք շարունակեցին ընդհատված խոսակցություն

նր: Յես լսում եյի, բայց վոչինչ չեյի հասկանում... «Ի՞նչ են ընծայելու», — այդ միտքը մեկի նման ցցվեք եր գլխումս, և ել ուրիշ վոչնչով չեյի ուզում զբաղվել:

Սեղանի վրա դրված եյին տուփեր, դանազան փաթեթներ... Յես մի վախկոտ հայացք ձգեցի նրանց վրա և նորից կախեցի գլուխս — ի՞նչ կա արդյոք նրանց մեջ... վո՞րն է իմս... իսկ յեթե վոչինչ չտան... վո՞չ... վո՞չ, անկարելի յե, — համոզում եյի ինքս ինձ... — Ընկերները անչպես պիտի նախանձեն ինձ... Յեթե քաղցրեղեն ել տան, Սերգոյին ել կտամ. կուրախանա, նա վոչ մի հարուստ ազգական չունի... Յե՞րբ կտան... Յերևի գնալիս: Հետաքրքրությունից և անհամբերությունից յես դողում եյի:

Թեյից հետո, յես վեր կացա, վոր գնամ, բայց նրանք ինձ ասացին վոր մնամ ճաշի: Յես ասացի, վոր մայրս պատվիրել է չուչանալ: Իսկապես յես ուրախությամբ կմնայի, բայց վորովհետև վճռել եյի, վոր միմիայն գնալիս ընծա կտան, դրա համար ավելի եյի շտապում:

Յես մոտեցա. սիրտս թրթռում եր... ահա կվերցնի սեղանի վրայից իմ ընծան... յես մոտենում եյի տանտիրուհուն, մեկնեցի ձեռքս... Մի՞թե վոչինչ չեն ասու...

Փո՞ղ... ահամա ընկավ ձեռքիցս, մեքենաբար յես կուացա և վերցրի. նոր, փայլուն հինգ կոպեկանոց եր, վոր ձեռքը տալիս՝ նա դրել եր ձեռքիս մեջ... Մի վայրկյան լուռ մեխված եյի տեղումս, հինգ կոպեկը սեղմած ձեռքիս մեջ, չգիտեյի ինչ անել. բոլոր յերեվակայական յերազներս ողբ ցնդեցին, նրա փոխարեն հինգ կոպե՛կ...

Յես ուզում եյի լալ, գոռալ, ասել, վոր չեմ ուզում, ինձ հարկավոր չե՛ ձեր փողը...

Հազիվ կարողացա զսպել հեկեկանքս և համարյա վազելով գուրս յեկա սենյակից... արագ իջա աստիճաներից. սիրտս ճմլվում եր, արցունքը խեղդում եր կոկորդս... Յես չեյի կարողանում հասկանալ: Ինչո՞ւ ինձ փող տվին, չե՞ վոր ուրիշ յերեխաներին խաղայեք-

ներ են տալիս, քաղցրեղեն, ինչո՞ւ ինձ ել մի խաղալիք, քաղցրեղեն չտվին, այլ հինգ կոպեկ...

— Հի՛նգ կոպեկ... հինգ կոպե՛կ, — անգիտակցաբար կրկնում եյի յես:

Մի քանի րոպե անց՝ յես կանգնած եյի մուտքի դռան մոտ, հինգ կոպեկն ամուր սեղմած ձեռքիս մեջ և չգիտեյի ինչ անել: Հանկարծ մի միտք լուսավորեց իմ ուղեղը, տարօրինակ միտք... ձգեցի այն՝ նամակների արկղը և, ինչպես մի հանցավոր, սկսեցի փախչել այդ սեղից:

Տուն հասա. պատմեցի մորս իմ ընծայի մասին: Նա արտասովեց, համբուրեց գլուխս և վոչինչ չասաց: Յես նկատեցի, վոր մի դառն ժպիտ խաղաց նրա շրթունքների վրա: Յես չկարողացա զսպել արցունքներս, ընկա մորս գիրկը, և սկսեցի հեկեկալ:

— Ինչո՞ւ գնացիր, ինչո՞ւ չլսեցիր ինձ...

— Ների՛ր, մայրիկ... Մայրի՛կ, յես նրանց դռան վրա կպցրած նամակների արկղը ձգեցի:

— Փողը՞:

— Այո...

Նա ժպտաց, համբուրեց ինձ, մի կաթիլ արցունք ընկավ ձեռքիս վրա...

ՅԵՐԵՔԻ ԿՈՊԵԿ

Մի մութ, նեղ գետնահարկ սենյակ էր. խոնավությունից բորբոսնած պատերից գերեզմանային սառնություն էր փչում: Հողե հատակի վրա փռված էր մի հրնամաշ, ցեխոտ խտիր, վրան մի քանի պատառոտած հագուստ և համարյա ուրիշ վոչինչ:

Պսիրի վրա պառկած էր մոտ 13 տարեկան մի տղա՝ փաթաթված ծվեն-ծվեն յեղած վերարկվի մեջ: Նրա վոտների մոտ՝ ձեռները ծնկներին հենած, գլուխը կախ՝ նստած էր մեկ ուրիշը:

Սենյակի զանազան անկյուններում յերբեմն յերբեմում եյին փոքրիկ, չարածճի մկներ, վորոնք արագ գուրս եյին վազում բներից և նույն արագությամբ ծածկվում, յերբ մեկն ու մեկն հառաչում կամ հազում էր:

— Չուր... — մրմնջաց տղան:

Մյուսը լուռ բարձրացավ, աջ վոտքի վրա կաղալով՝ մոտեցավ, վերցրեց անկյունում դրած կավե կուլան և տվավ տղային: Տղան նստեց և սկսեց ագահությամբ խմել: Նա գունատ էր, նիհար, կույր աչքերի սպիտակուցն այդ կիսախավարի մեջ ճնշող տպավորություն էր գործում:

— Ներսս այրվո՛ւմ ե... — ասաց տղան՝ յետ տալով կուլան և նորից ընկավ չոր խոտի վրա: Մյուսը նստեց իր տեղը՝ հռուլով հայացքը տղայի վրա:

Սենյակում դարձյալ տիրեց լուռություն: Յերբեմն միայն լսվում էր հիվանդի անքոցը:

Կարճահասակ, կլոր մի մարդ էր ապերը: Նրա փոքրիկ գլուխը բոլորովին չէր հարմարվում մարմնին:

Նա կարծես ուժով էր բաց պահում ճաշոտ, կարմրած աչքերը:

— Սէյրան, ախր եսոր ուտելու բան չունենք, — լավեց նրա փոքրիկ, համարյա կանացի ձայնը: Տղան մնաց անշարժ:

— Վեր կաց, բալաս, դուրս գանք. աստված վաղորմած է, կարելի յե մի քանի կոպեկ հավաքենք. հոքաղցած մեռնելու չենք:

— Վեր կաց, բալաս, վեր կաց, ես քանդվածում, վոր մարդ մեռնի յել, տիրություն անող չի լինի:

Վերջին խոսքերի վրա տղան դանդաղ բարձրացավ ու նստեց:

— Ախր չեմ կարող, ապեր:

Հինգ որվա հիվանդությունը նրան բոլորովին ուժասպառ էր արել:

— Մի քիչ զոչաղ կաց, դուրս գանք, սիրտդ կրքացվի, ես անտեր մնացած սենյակի ուղը կարծես հոտած լինի. եստեղ սաղ մարդը կհիվանդանա, ուր մնաց հիվանդը. համ ել հո չի լինի քաղցած մնալ, — կմկմալով ավերացրեց նա:

— Հա՛, լավ ես ասում:

Տղան դողդողալով սկսեց հագնել տրեխները:

— Գնանք, ապեր, սաղը վերցրու:

Նա ուժ գործ դնելով՝ աշխատեց վոտքի կանգնել: Գլուխը պտավեց, ընկավ, նորից բարձրացավ:

— Փայտս տուր:

Նա ապոր փեշից բռնած՝ որորվելով հետևեց նրան:

Մի քանի քայլ հազիվ եյին արել, վոր տղան կանգնեց:

— Հը, ի՞նչ կա:

— Մի քիչ կաց, գլուխս պտավեց, ծնկներս ծալվում են:


Մի խոր շունչ քաշելուց հետո, նա նորից բռնեց ապոր փեշից, և շարունակեցին գնալ:

— Հիմա մի քիչ լավ եմ:

— Յես չասացի, վոր դուրս գանք, լավ կլինես:

— Մի քիչ կամաց գնա, ապեր:

Նրանք լուռ առաջ եյին գնում:



— Ինչո՞ւ վոչ մի տեղ չես մտնում :
 — Ասում եմ եսպես տեղ գնանք, վոր մի բան տան :
 Նրանք ներս մտան մի մեծ բակ. մի քանի շներ ա-
 հազին աղմուկով հարձակվեցին նրանց վրա : Նրանք
 ձեռքի փայտերով աշխատում էին պաշտպանվել, բայց
 այդ ինքնապաշտպանութիւնն ավելի յեր զրգուում շնե-
 րի բարկութիւնը : Յերեւի յերկար կտեվեր, յեթե յերկ-

րորդ հարկից սպասավորը չնկատեր և ողնության չգար,
 չհալածեր շներին, վորոնք այնքան ատում են պատա-
 ոտած շորեր հազնողներին :

Նրանք կանգնեցին բակի մեջտեղում :

Տղան վերցրեց սաղը, մի քանի անգամ թույլ-թույլ
 խփեց լարերին և կարծես մեքենաբար սկսեց յերգել :

Պատշգամբի վրա յերբեմն յերևում էին գլուխներ,
 վորոնք խսուշն անհետանում էին :

Յերզն անկանոն բարձրանում, ցածրանում էր. չա-
 փազանց ուժից՝ տղայի կոկորդի յերակներն ուռել էին
 ալտերը շառագունել, աչքերը լայն, անբնական
 կերպով չոփել. յերգը խեղդվում էր նրա կոկորդում :
 Մի փոքր շունչ տոնելով՝ նա աշխատում էր շարունա-
 կել, մատները թույլ խփում էին լարերին, ձայներ
 հանում, վոր խառնվելով նրա յերգի հետ՝ լայիս էին
 թույլ, հազիվ լսելի :

Յերզն ընդհատվեց. նա գունատվեց, դողաց :

Մազն ընկավ ձեռքից, լարերն աղմուկ հանեցին,
 խլացնելով տղայի թույլ ձիչը :

Նա ուշաթափ ընկավ գետին :

Վերահարկի պատշգամբից՝ մեկը մի բան ձգեց
 գետի ներքև, վորն ողի մեջ պատույտներ դործելով՝ ըն-
 կավ քարերի վրա, տղայի մոտ :

Յերեք կողեկանոց էր...

ԽՈՒԺԱՆՆԵՐ

1.— ՓԱԽ

(ԴԱՌՆ ԱՆՅՅ.ՁԵՅՑ)

Յերեք ընկերներ մի ուր խելք-խելքի սովին և գիշերով, մի կերպ ծղկվելով գիշերապահի աչքից, անցան ցանկապատը, այնտեղից դաշտ և կորան գիշերային խավարի մեջ:

Թե ո՛ւր ելին գնում, իրենք ել չգիտեցին: Լսել ելին, վորբանոցից փախած ու կրկին վորբանոցը դարձած տրդաներից, թե ինչ վոր քաղաքներ կան, վորտեղ ամեն մեկն իր գլխի տերն է, ապրում է ուրախ, ազատ...

Այնտեղ չկան ամերիկյան վորբանոցների ծեծն ու կոպտութունները: Չկա յերկաթյա ցանկապատը, վոչ ել հրացանով պահակ:

Նրանց առաջնորդում եր 13 տարեկան, արդեն մի անգամ փախած, ճանապարհներին ծանոթ, մի աչքը չիլ, գանգուր մագերով մի տղա:

Դեռ մութ եր, յերբ նրանք մտան անտառ, վորտեղից սկսվում եր վոլորապտույտ մի վերելք, դեպի Դրվալ սարի գագաթը:

Փանգուր մագերով տղայի կարգադրությամբ՝ փոքրիկները նստեցին հանգստանալու և սպասելու լույսը բացվելուն:

Նրանք չոր ճյուղերից խարույկ վառեցին: Թեև հուլիսը դեռ չեր վերջացել, բայց ցուրտ եր, խոնավ:

Յերեք կողմից այնքան փչեցին, աչք ու բերան ծրխով լցրին, մինչև խարույկը բոցավառվեց և կրակի տաք լեզվակները չոյեցին նրանց այտերը:

Յերբ կրակը վառվեց, նրանց դեմքերը պայծառա-

ջան. մութ անտառի զարզանդ աղբող խորհրդավորութունը փարատվեց:

— Կպա՛վ, — ուրախ բացականչեց մեկը:

— Կպա՛վ, կպա՛վ, — կրկնեցին մյուս յերկուսը և կծկվելով կրակի մոտ՝ լռեցին:

— Ես անտառում գայլեր չկա՞ն, — քիչ լուրթյունից հետո հարցրեց մեկը:

— Կա՛ն, պատասխանեց գանգրահեր տղան, ձեռքի մեջ մանրելով չոր տերևները և լրագրի թղթի մեջ փաթաթելով, մի այրվող փայտ վերցրեց, կպցրեց ծխախոտն ու մեծի նման սկսեց ծխել: Փոքրիկ Գալոն վախեցած կպավ ընկերոջը:

— Կա՞ն... բբ... բա՛

— Մի վախենաք, գայլը կրակին մոտ չի գա: Եդ ճյուղերը վրա տուր... Գայլ ձմեռը կլինի... Ամառն էս տեղերում գայլն ի՛նչ գործ ունի:

— Ամառը չի՞ լինում:

— Թաք-թուք:

Վախեցած աչքերով նրանք նայեցին իրենց շուրջը. խարույկի բոցերից ծառ ու թուփ մեծանում էին և փոքրանում, կարծես լուռ պարում էլին:

— Դժվարը Դվալն է, վոր բարձրացանք, թեկուզ մինչև Ղարաքիլիսա վազելով կզնանք, — ասաց Վաչագանը, դեռ ձգեց ծխախոտը և փակեց աչքերը: Մյուս յերկուսը գրպաններից մի-մի կտոր հաց հանեցին և ծուլորեն սկսեցին ծամել, մինչև վոր գլուխները թուլացած ընկավ ուսերին, աչքերն ահամա փակվեցին և կատվի ձառերի նման սղմվեցին իրար ու քնեցին:

Դեռ լույսը նոր եր բացվեք, յերբ Վաչագանը վտաքի յեկավ:

— Գալո՛, Սեթո՛, վեր՛... Շուտ արեք:

Գալոն ու Սեթոն նստեցին տեղները, տրորեցին աչքերը, նայեցին իրար և չհասկացան թե վո՞րտեղ են. սա ինչ անտառ է... Ինչու վորբանոցում չեն...

— Շո՛ւտ, շո՛ւտ, — շտապեցնում եր Վաչագանը, գնացքից կուշանանք:

Գալոն ու Սեթոն դժկամահուրթյամբ վեր կա-

ցան... ցուրտ եր, սրթսրթալով նայեցին խարուկին,
վորից սառ մոխիր եր մնացել միայն: Նրանք իջան ձո-
րը, վորտեղ խճուղին եր և սկսեցին վեր բարձրանալ:

Քիչ անց՝ նրանք թողին խճուղին ու կարճ ճանա-
պարհով մագլցելով, սողալով բարձրանում էին:

Ամպերի հսկա կույտերը, պոկվում էին ժայռերի
կրճքից, խառնվում իրար, կրկին բաժանվում:

Արևը բավական բարձրացել եր:

Ամպերը մնացին նրանց վտանների տակ: Նրանց չէր
զբաղեցնում ամպերի այդ խաղը և նրանք չնկատեցին
թե ինչպես ամպերը գծերի նման հանկարծ իրար սն-
ցան, իրար հրհրելով, իրար վտտի տակ տալով՝ խոռ-
նովեցին դեպի հրդեհատեղը, շտապող հրդեհաշեջիչների
պես, փովեցին, բարձրացան այնքան արագ, վոր մեր
փոքրիկները չհասկացան, թե այդպես հանկարծ ո՛ւր
կորավ արևը և ինչպես կապույտ յերկինքը ծածկվեց ու
մառախուղը շրջապատեց չորս բոլորը. անձրև սկսեց
տեղալ:

— Վաչագան... Սեթո՛ վո՞րտեղ եք...

— Գալո դե՛սը, դե՛սը...

Մառախուղի միջից նրանք ձայն էլին տալիս իրար:
Գալոն դտավ ընկերներին և վախեցած՝ բնության այդ
անսպասելի փոփոխությունից, կտավ Վաչագանին:

Շատ չանցած՝ անձրևը դադարեց: Արևը կրկին
զուրս յեկավ: Ամպերն այդ բարձունքից իրենց ձորը
նետեցին և ծանրացան ծառերի վրա:

Անտառն ամպի քուլաներ հագավ: Ծառերի դա-
գաթները հազիվ նշմարվում էին մառախուղի միջից:

Ամպերը մնացին ցածում: Մեր փոքրիկ փախսաա-
կանները հանել էին կոշիկներն ու խուրջինի պես զցել
ուսերին:

Մինչև ծնկները ցեխտաած, մինչև վոսկորները
թրջված, դուրս յեկան անտառից խճուղու վրա:

— Քիչ մնաց, հա՛...

Միրա տվեց Վաչագանը և առաջ ընկավ:

Գալոն, վորն ամենից փոքրն եր, հազիվ եր քարչ
զալիս նրանց յետևից:

Վերջին ուժերը հավաքելով, մի վերջին ճիգ ել ա-
բին և կես ժամի չափ գնալուց հետո, հոգնած, ուժաս-
պատ թափվեցին չոր մնացած մի ժայռի հովանու տակ:

Արդեն սկսել եր մթնել, յերբ նրանք հասան Ղարա-
քիլիսա և դողալով կճկվեցին կայարանի պատի տակ,
սպասելով Թիֆլիսից յեկող գնացքին:

Շոգեմեքենայի ձայնից նրանք վեր ցատկեցին և
չփոթված իրարու դիպան. հուզված, վախեցած աչքե-
րով նայեցին Վաչագանին, թե ի՞նչ կասի նա:

— Լավ լսեցեք ինչ կասեմ, — խրատական յեղանա-
կով սկսեց Վաչագանը... Յե՛վ նա սոյորեցրեց նրանց,
թե ինչպես պետք է վազոն մտնել, վորտեղ՝ ինչպես
թագնվել, և յեթե բան է բռնվեն ու իջնեն, ինչպես
յերրորդ գանգից հետո, յերբ գնացքը շարժվի, էլի
բարձրանան:

Գաղտագողի նրանք ներս սողացին վազոնը և պահ-
վեցին վերի դարակի վրա՝ կճկվելով իրերի մեջ:

Գալոն ու Վաչագանը իրար մոտ էլին, իսկ Սեթան
հայտնի չէր թե՛ վորտեղ թագնվեց:

— Ի՞նչ յեղավ Սեթոն, — շուտով հայրցրեց Գալոն:

— Բան չի լինի, մի վախենա:

— Բաս վոր բռնվի՞:

— Ելի կնստի, դոչաղ ե: Ես գնացքով չի հաջողվի,
մյուսով կգա:

Հասան Յերևան, դուրս յեկան թագստատեղից:

Յերկար այս ու այն կողմը ընկան, կանչեցին, բայց
Սեթոն չկար:

Գալոյի աչքերը ցլվեցին, դեմքը ծամածուվեց և
մղկաալով սկսեց լալ:

— Ի՞նչ ես գտում:

— Բա Սեթոն, բա Սեթոն... — արցունքների մի-
ջից հեծկոտած Գալոն ու ել վոչինչ չկարողացավ ասել:

— Հա, ի՞նչ յեղավ, չի կորչի, յերեկ ճանապար-

հին իջեցրել են, մյուս գնացքով կգա... Տեղն է նրան, ասացի, վոր չհեռանաս ինձանից:

— Քաղցած սիրտս գնում է,— բորբոքովին անսպասելի կերպով խոսքը փոխեց Վաչագանը և ձեռքը գցելով Գալոյի ուսին, քայլերն ուղղեց դեպի քաղաք:

Շուկայում Վաչագանը ծախեց իր վերնաշապիկն ու մի լավ, կուշտ հաց կերան:

2. ԽՈՒԺԱՆ

Ամբողջ մի շաբաթ թափառեցին նրանք Ղանթարի շուրջը:

Յերեք որ շարունակ, գնացք գալու ժամանակ, գրնում ելին կայարան և սպասում Սեթոյին:

Բայց նա այդպես ել չեկավ:

Վաչագանը նախկին ընկերներին գտնելու հույսով, շատ դես ու դեն ընկավ, բայց նրանք վտոտվ գլխով կորել ելին:

Քաղցն ստիպեց նրան վողորմության դիմել, բայց՝ անհաջող: Նրանք յեկան այն յեզրակացության, թե վորբանոցի զգեստներն են արգելք հանգիստանում. և մեկը մյուսի յետևից ծախեցին ու մնացին շապիկ-վարտիկով: Տասնըհինգ կոպեկանոց ալյուրի մեշոկի մի թիկնոց գնեցին՝ ձգեցին ուսերին և խառնվեցին խուժաններին:

Մի քան որ նրանք կուշտ ելին:

Ծախած զգեստների փողով ձմերուկ ել ելին առնում, սեխ ել, խաղող ել:

Քանի Վաչագանի գրպանում փող կար՝ վոչ մի բանի մասին չեյին մտածում, բայց յերբ փողերը վերջացան և այլևս բան չմնաց ծախելու, ամբողջ որը քաղցած մնալուց հետո, Վաչագանը մտեցավ անցորդներից մեկին և սպառնալից գիրք ընդունելով՝ գրեթե գոռաց.

— Մի շահի տուր, հաց առնեմ:

— Կորե՛ր, անպիտան:

Չեռքի փայտով սպառնաց անցորդը և մյուս ձեռքով խլեց Վաչագանի բերնից ծխախոտն ու դեն ձգեց:

— Քաղցած ե ու ծխում ե. չի յել ամաչում:

— Շատ լավ եմ անում, աչքդ ել եմ հանում...—

յետ յետ գնալով մի լավ հայհոյեց ու փախավ Վաչագանը:

Գալոն վախեցած հետևեց ընկերոջը:

Վաչագանին վաղուց ծանոթ եր այդ կյանքը, բայց Գալոյին, վորբանոցի պատրաստի կյանքից հետո, շատ դժվար եր գալիս. և հաճախ յերբ մենակ եր մնում, լալիս եր ու լալով մտածում, թե ի՞նչ հիմարությունն արեց, վոր ընկերացավ Վաչագանին և փախավ վորբանոցից:

Նրանց կացությունը քանի գնում ծանրանում եր: Վողորմություն խնդրելու և անցորդների խիղճը զարթնեցնելու բոլոր միջոցներն սպառվում ելին, ել վոչ վոք չեր հավատում, վոր նրանք քաղցած են, վոչ վոք ուշադրություն չեր դարձնում նրանց աղեկտուր լացին ու անտարբեր անցնում ելին նրանց մոտով:

Խուժանի համազգեստը հագած Վաչագանն ավելի հանդուգն ու աներես դարձավ, բայց աներեսությունն ել չոգնեց: Նա տեսավ, վոր վողորմություն խնդրելու համար ինքը միանգամայն անպետք ե, դրա համար ել Գալոյին եր ստիպում մոտենալ, վորը թխսկանի տակ ծեծված ձուտի յեր նման:

Անհամարձակ, լալկան ձայնով նա մեկնում եր ձեռքը և մրմնջում.


— Անոթի՛ր յեմ... Մի կոպեկ հացի փող...

Վաչագանը հեռվից դիտում եր և յերբ նկատում եր, վոր մեկն ու մեկը մի բան տվեց, վորսի վրա հարձակվող բազեյի պես սրնթաց հասնում եր Գալոյին և խլում փողը:

— Պառկիր դետին ու ձենդ գլի՛ր...

Հրամայում եր Վաչագանը՝ բոունքքով հասցնելով Գալոյի կողքին, իսկ ինքը գնում հեռվից դիտելու:

Վաչագանը տեսնելով, վոր վողորմությունից բան չի դուրս գալիս, և նկատելով, վոր ճաշարանների առջև խուժան ե խմբված՝ իր բախտը փորձեց ճաշարանների առջև ևս, բայց այդտեղ ել ուրիշ արգելք կար: Վոչ



Վոք նրանց չէր ճանաչում, իսկ ամեն մի ճաշարան իր խումանն ուներ և ուրիշ վոչ վոք չէր համարձակվում մոտ գնալ, թե չէ վատ կվերջանար գործը...

Վաչագանը հույս ուներ, վոք մի որ կհանդիպի նախկին ընկերներին և շարունակ հույս էր տալիս Գալոյին:

Թող մի գտնեմ, են ժամանակ կտեսնես ինչ լավ կլինի:

Բայց այդ ընկերները չկային ու չկային, կարծես գետնի տակն էյին անցել:

Քաղցր նրան հնարագետ էր դարձրել, այդ որն էլ Վաչագանը նոր բան մտածեց և անմիջապես դիմեց խրագործելու այդ ծրագիրը:

Գալոյի հետ միասին սկսեցին պատել անից տուն, ինքը խզված ձայնով յերգում էր և դալոյին ստիպում պարել:

Գալոն պարում էր, թեև ավելի շուտ կը նստեր ու բարձր ձայնով լաց կլիներ:

Վախեցնելով, ծեծելով նա Գալոյին կարողացավ միանգամայն հպատակեցնել իրեն և անել տալ այն, ինչ ուզում էր:

Տեսնելով, վոք դրանից էլ բան դուրս չեկավ, լուրջ կերպով սկսեց մտածել իր անելիքի մասին. յերկու թաշկինակ հանեց անցորդների գրպաններից, մի պառավ կնոջ ձեռքից հացը խլեց ու փախավ: Այնքան տրագ և անսպասելի յեր կնոջ համար այդ հափշտակությունը, վոք խեղճ կինը ձայն էլ չկարողացավ հանել և մնաց քարացած:

Անցորդները չգիտեցին, ծիծաղե՞ն, թե գայրանան:

Իսկ Գալոն վախեցած դես ու դեն ընկավ ու չգիտեր կանգնե՞ր, թե փախչեր, կարմրեց մինչև աղանջները և թվում էր, թե այ, հիմա կսկսի լալ:

Նրախուսվելով առաջին հաջողությունից, Վաչագանը քանի գնում ավելի յեր վողեվորվում և ծեծի սպառնալիքի տակ Գալոյին էլ ստիպում էր թաշկինակներ հանել գրպաններից, յերեխաների ձեռքերից իր և ուտելիք խլել:

Մի քանի անգամ միլիցիոներն ընկավ նրանց յետևից, բայց բռնել չկարողացավ, իսկ մի քիչ հեռանալով Վաչագանն սկսեց քարով սպառնալ միլիցիոներին: Գողացած իրերը նրանք ծախում էյին և փողերի մեծ մասը գնում էր խումարի վրա:

Վաչագանը նոր ընկերներ էր գտել և հետները խու-

մար եր խաղում, հավատացնելով Գալոյին, վոր դա միակ միջոցն ե փող հավաքելու, շաքարեղենի կամ նույնիսկ ծխախոտի առևտուր սկսելու համար:

Բայց բոլոր փողերը գնում եյին խումարի. վոր մի կողմէկ չէր ավելանում, և նրանց դրությունը քանի գնում՝ վատանում եր:

Գալոն հրատարակել եր այդ «ազատ» կյանքից, բայց այնպես եր խճճվել Վաչագանի ցանցում, վոր պրծնելու հնար չկար:

Յերկար ժամանակ նրանք քնելու մշտական տեղ չունեյին, քնում եյին վորտեղ հասնում եր՝ փողոցում — մայթերի, աստիճանների վրա, ավերակ տներում, ոռւսաց յեկեղեցու բակում, մինչև վերջնակա նապես իրենց բնակավայր հաստատեցին Կոմունարների Այգին:

Գալոն հիվանդ եր:

Վաչագանը նրան թողեց ծառերի տակ, իսկ ինքը գնաց:

Գալոն յերկար ժամանակ յերեսի վրա փռված եր կանաչ խոտերի վրա: Առավոտից անոթի յեր, բայց ախորժակ չկար, գլուխը ծանրացել եր, բերանը դառն եր և մարմինը կոտորովում եր:

Նա հիշեց վորբանոցը, շուռ յեկավ կողքի վրա, գլուխը հենեց ձեռքին և մի կաթիլ արցունք ցոլաց նրա մեկամաղձոտ աչքերում:

Նրան՝ այնքան հեռու, անհասանելի՝ թվաց: Վորբանոցին հետևեց գյուղը: Ազոտ կերպով հիշեց այն տունը, վորտեղ ապրում եր վորբանոց մտնելուց առաջ: Յերազի նման հիշեց մորը, վոր մի ուր գնաց ու ել յետ չեկավ և մինչև հիմա յել չգիտեր, թե ինչ յեղավ:

Յերկու շաբաթ հետո հարևանները նրան տարան վորբանոց:

Ազգանունը վորբանոցի գրքերում կար, բայց ինքը չգիտեր: Գյուղում նրան անունով չեյին կանչում, այլ՝ Ծովինարի տղա եյին ասում: Բայց ինքը հիշում եր, վոր մայրը «Գալո ջան» եր ասում:

Հենց առաջին որվանից վորբանոցի կյանքը նրան շատ նեղ թվաց. առաջին որվանից նա մտածեց փախչել, գնալ, ո՞ւր, ինքն ել չգիտեր, բայց հեռո՞ւ վորբանոցից:

Առաջին որերը նա շարունակ փախչում եր քնկերներէրից, առանձնանում, մենակության մեջ դառնորեն լալիս, լալիս՝ մինչև քունը տանում եր...

Յերկու տարու չափ նա մնաց Ստեփանավանի ամբարիկյան վորբանոցում: Յերբեք չհաշտվեց այդ կյանքի հետ և հարմար առիթից ոգտվելով՝ փախավ ու այժմ մեն-մենակ, մերկ ու քաղցած ընկած եր այս ծառերի տակ:

Դեռ ութ տարին չէր լրացել, բայց կյանքը նրան ժամանակից առաջ հասունացրել եր: Նա իր տարիքից ավելի մեծ եր և խորը կերպով զգում եր իր տանջալից վիճակը:

Նա գիտեր, վոր Վաչագանը իրեն դեպի կորուստ է առաջնորդում, բայց նրանից ազատվելու հնար չէր գտնում:

— Յե՞տ փախչել վորբանոց... Բայց ինչպե՞ս... Փախչե՛լ, փախչե՛լ...

Այդ միտքը մեխի պես ցցվել եր նրա գլխում և մտածում եր, թե ինչպես իրագործի այդ ծրագիրը, վոր Վաչագանը չիմանա:

Այդ մտքերի մեջ եր Գալոն և չտեսավ, թե ինչպես Վաչագանը յեկու ուրիշ տղաների հետ մոտեցել եր և կանգնել իր գլխի վերևը:

— Սա՞ յե:

Գալոն բարձրացրեց գլուխը և տեսավ իր մոտ Վաչագանին ու յերկու անծանոթ տղաների՝ մեշոկե թիկնոցներով, յերկուսն ել կեղտոտ, գզգզված. համարձակ, հանդուգն հայացքով:

— Հա: Վո՞նց ես, Գալո. չեյի՞ տսում, հը, տեսա՞ր, դտա, սա Համբարձումն ե, սա ել՝ Սարգիսը:

— Անունը Գա՞լո յե, — հարցրեց Սարգիսը, աչքի բերբեր խաղացնելով:

— Ի՞նչ ես փովել, վե՛ր կաց:

— Լո՛, լո՛, լո՛, լո՛ յերգիր, Գալո: Վեր կաց, փոջ-
լոտ մալմուն, փոտով խփեց Համբարձումը և բերանը
մինչև ականջները բացած հռհռայ:

— Գալո, ընկերներս են. ասացի, վոր կզտնեմ և
գտա, վե՛ր կաց գնանք:

Գալոն լավ չմբռնեց թե ովքեր են և թե ո՛ւր են ու-
զում տանել իրեն, բայց ահամայնից փոտքի յելավ, նա-
յեց այն յերկուսին և չգիտեր ինչու, վախ զգաց նրան-
ցից:

— Ի՞նչ ես աչքերդ չոնել:

— Քաղցած ես, հա՞, — ասաց Վաչագանը, կեղտուտ
չապկի միջից մի կտոր հաց ու մի կտոր սևացած միս
հանելով՝ տվեց նրան:

Գալոն վերցրեց ու սկսեց ծամծամել:

— Դե, յայլա, ուտելով արի՛:

Նրանք առաջ բնկան. Գալոն լուռ հետևեց նրանց:

Արդեն սկսել եր մթնել:

Նրանք գնում էյին, Գալոն ել յետևներից:

Նրանք մոռացել էյին Գալոյին. հրհրում էյին ի-
բար, ծիծաղում, հայհոյում, գոռգոռում:

Գալոն մի քանի անգամ բերանը բաց արեց հարցնե-
լու, թե ո՛ւր են գնում, բայց վախից լռեց:

Քաղաքի աները վերջացան. նրանք ծովեցին, դուրս
յեկան ձանապարհից:

— Ո՞ւր են գնում:

Քիչ անց՝ մի փոս տեղում կանգ առան:

Արդեն մութն եր:

3. ՆԱՎՈՒՄ

Վազուց, շա՛տ վաղուց եր, վոր այդ խարխլած նա-
վը խարխուս եր ձգելը նոր կայարան կոչված տեղում:

Որը որի վրա, տարեց-տարի նա քանի գնաց ավե-
լի ու ավելի թշվառ տեսք բնդունեց:

Պատուհանները մնացին առանց ապակիների, ներկը
թափվեց վրայից, ժանգոտեց ամբողջ իրանը, ամե՛ն
ինչ ժանգոտեց:

Այդպես ընկած եր յերկաթուղու գծից քիչ հեռու,
փոսի մեջ մարդկանցից մոռացված:

Անձրեվները ծեծում էյին, քամիները փոշու մեջ
խեղդում, արևն այրում:

Պինդ, պինդ կպած եր հողին: Ծանծաղուտի մեջ
խրված նավի պես կողերը ջարդված, ծակծկված:

Նրանք կանգ առան այդ նավի մոտ:

Նավի վրայից լավեց շան կբանչոցը, վորն ուրախու-
թյունից իրեն ուզում եր նավից ցած նետել:

Չա՛յնդ, Չամալ, — սաստեց Համբարձումը և յեր-
կաթե լարերից շինած սանդուխներով վեր բարձրացավ,
մի կողմ հրելով շանը:

— Կորիւր, Չամալ, — բարկացած կանչեց նա չոքե-
լով աստիճանների մոտ ու դարձավ ցածը կանգնածնե-
րին:

— Դե, բարձրացե՛ք:

Ցածից Սարգիսը, վերևից համբարձումն ոգեցցին
հյուրերին՝ վեր բարձրանալու: Շունն ուրախությունից
փաթաթվում եր նրա վոտներին, կաղկանձում: Իսկ
յերբ վաչագանը և Գալոն նավի վրա էյին, նա անձա-
նոթ հոտ զգալով, միանգամից մոռացավ իր ուրախու-
թյունը, և բռնեց Գալոյի տոպրակի ծայրից:

Գալոն վախեցած ճչաց:

— Ա՛յ թուլա, — սպառնալից կանչեց սարգիսը և
մի հարված հասցրեց շան փորին, վորը պոչն իրեն քա-
չեց ու վնգստալով փախավ:

Նրանք փայտե կոտրած աստիճաններով իջան ցած
ճրագի ծխից սևացած մի խցիկ: Հատակը ծածկված եր
ցնցոտիներով, վորոնց ծակոտիներից դուրս էյին թափ-
վել տրորված խոտի ցողունները:

Նավթի ճրագն աղոտ լուսավորում եր խցիկը. ան-
կյունները մթության մեջ էյին:

— Գալո՞ւտ... — ձայն տվեց Համբարձումը:

— Հը՞, — լավեց մութ անկյունից:

— Հլա մտիկ, ո՞վ ե յեկել:

— Ո՞վ ե:

— Մեր Վաչագանը:

— Ի՞նչ Վաչագան... Հա, են վոր կորել եր... Յե-
կամ հա՞...

— Աղա, Գալուստ, ի՞նչ ե պատահել, խի՞ յես
պառկել:

— Վո՛տս ե...

— Քարով են տվել, — աչքով անելով շնչաց Սար-
գիսը:

— Վոչինչ, թող վեր կենամ՝ հերները կանիծեմ,
ձեռքիցս չեն պրծնիլ, — սպառնաց նա պառկած տեղից:

— Ո՞վ ե խփել:

— Սուրբ Սարգսի խուժանները: Կռիվ են արել:
Պոմարում փող ե տարել, թափվել են վրան վոր ծե-
ծեն, փողերը ձեռքից անեն, փախել ե, քարով տվել են
վոտին:

Գալոն մոլորված կանգնել եր և չգիտեր ինչ անել:
Նրան բոլորովին մոռացել եյին:

Այդ րոպեյին յերգելով ներս մտավ մեկը, յետևից
մի ուրիշը:

— Հովակիմ՝

— Ճանաչո՞ւմ ես սրան:

— Ո՞վ ե, մի տեսնեմ... Եդ անտերը ելի ծուխ ե ա-
նում, բան չի յերևում, — ասաց նա մոտենալով Վաչա-
գանին ու մի քանի րոպե լուռ մնալուց հետո՝ բղավեց:

— Աղա, հլա սրա՛ն... Վաչագա՛ն... Տունդ չքան-
գըվի, վո՞րտեղից դուրս ընկար. կարծում եյի են աչ-
խարհն ես գնացել:

Նրանք շրխկացնելով՝ ձեռք-ձեռքի տվին:

— Յե՞րբ ես յեկել:

— Մի ամսից ավել ե:

— Բա վո՞րտեղ եյիր:

— Դես ու դեն: Շատ փնտռեցի, չկայիք. ո՞ւմ մըտ-
քից կանցներ, թե տունտեղ եք դառել:

— Ես մեկն ո՞վ ե:

— Չես ճանաչի:

— Մի տղան, — մեջ մտավ Սարգիսը:

— Վո՞րտեղից ես գտել:

— Վորբանոցից... Աղա, Գալո, դեսն արի:

Գալոն տեղից չչարժվեց: Հովակիմը մոտեցավ,
վոր մոտից տեսնի, բայց մթության մեջ բան չընկելով,
ձեռքով բամբեց Գալոյի գլխին:

— Լավ, մնա առավոտը... Շնթուր, ամա չազգաս,
թե չե քոթագ կտամ... Չահլես գնում ե տղզաններից:

— Դե ասացեք, ի՞նչ կա, չկա...

— Ինչ ասես: Թալան ենք անում: Բաղերն ել հո կան
ու կան: Անցյալ ուրը, Գալուստն ու Սարգիսը մի կնկա
ձեռքից պայուսակ եյին թոցրել, միջին 9 մանեթ 22
կոպեկ փող կար:

— Վա՛հ:

Չարմացած և հիացած կանչեց Վաչագանը:

— Թաչկինակ-մաչկինակ դարտակ բաներ են, դրան-
ցից ոգուտ չկա... Ձեռք ենք քաշել:

— Բա Հայրապետն ո՞ւր ե:

— Չդիմացավ, վոտները ձգեց:

— Խե՛ղճ... Հիմա քանի՞ հոգի յեք եստեղ:

— Հը՞... Մեկ Սեթոն, Գալուստը յերկու, յերեք...
Հինգ հոգի յենք: Եդ լակոտին խի՞ յես հետդ քարչ
տվել:

— Պետք կգա, լացին ել կհավատան, ծիծաղին ել.
վոր գողացածը ձեռքին բռնեն՝ չեն հավատա: Ինչպես
մի աստծու դա՛ն:

Բոլորը մեկնվեցին հատակին, ցնցոտիների վրա:
Գալոն մնաց վոտքի:

Ի՞նչ ես կանգնել, հիմարի գլուխ, պառկիր քնիր,
չտղզաս, հոգիդ կհանեմ:

Գալոն վախեցած կատարեց Վաչագանի հրամանը և
կուչ յեկավ մութ անկյունում:

Յերկար ժամանակ Վաչագանն ու Գալուստը կիտա-
ձայն խոսում եյին. մի քիչ անց նրանք ել քնեցին:

Տիրեց լուռություն:

Հիվանդն եր միայն մեկ-մեկ տնջում:

Գալոն լուռ եր, բայց քնել չեր կարողանում. վա-
խից աչքերին բաներ եյին յերևում:

Նավթի ճրագը ծխաց յերկար ու հանգավ, խցիկը
թողնելով մութի մեջ:

Գալուն մեկ մտածեց դուրս գալ, փախչել. բայց ո՞ւր... Հիշեց նավի վրայի շունը, կամաց-կամաց թրմբեց, աչքերը փակվեցին ու քնեց:

Յերբ Գալուն զարթնեց, նավում բացի իրենից ուրիշ մարդ չէր մնացել:

Նայեց այն անկյունը, վորտեղից գիշերը հիվանդի՞ ձայն էր գալիս, այնտեղ էլ մարդ չկար:

Գլուխը դռնից դուրս հանեց և տեսնելով շանը՝ կրկին ներս քաշեց:

Այս ու այն կողմ նայեց և աչքն ընկավ սանդուխի մոտ ընկած մի կտոր սևացած, փոշոտած մսի. վերջրեց միտը և ավելի համարձակ դուրս հանեց գլուխը:

Շունն առաջվա տեղում, գլուխը թաթերի վրա նընջում էր:

Չայն լսելով՝ նա բարձրացրեց գլուխը և առամներն իրար սխմած մրմռած:

Գալուն սևացած մսի կտորը յերկու մաս արեց և մի մասը ձգեց շանը:

Շունը վրա պրծավ, և մի ակնթարթում, գրեթե առանց ծամելու, կուլ տվեց այն:

Գալուն ձեռքի մնացած կտորն էլ ձգեց իրենից քիչ հեռու:

Շունը սողալով մոտ յեկավ, վերջրեց մսի կտորը, կուլ տվեց և առանց տեղից բարձրանալու, պոչով սկըսեց թմբկահարել նավի տախտակամածը:

— Քուչի՛... քուչի՛... քուչի՛... — ձայն տվեց Գալուն և զգուշությամբ կիսով չափ դուրս յեկավ: Յերբ Գալուն մոտեցավ շանը՝ նա պառկեց մեջքի վրա, բարձրացրեց վրաները դեպի յերկինք ու պոչով սկսեց թակել հատակը և վնգստալ:

Գալուն համարձակ մոտեցավ, շոյեց նրա գլուխը, և առաջ անցավ:

Ուր գնում էր՝ շունը քայլ առ քայլ հետևում էր իրեն:

Գալուն ուշի-ուշով դիտեց նավը, նայեց ժ. սնգոտած

ծխնելույզին և բան չհասկացավ: Դա ի՞նչ բան էր. տուն էր՝ տուն չէր:

Հատակը տեղ-տեղ ծակծկված էր. նա զգուշությամբ էր փոխում վրաները, վոր ծակի մեջ չընկնի:

Ապա նայեց շրջակայքին, ուրախությունից քիչ մը նաց ճշար, յերբ տեսավ ծանոթ տեղեր. ահա կայարանը... Գաղաքի տները... կայարան տանող ճանապարհը...

Յերեկոյան այստեղ գալիս՝ նրան թվում էր թե, ինչ վոր հեռու, անծանոթ մի տեղ ընկավ, վորտեղից անկարող է դուրս գալ: Բայց տեսնելով ծանոթ տեղեր՝ ժպտաց: Փախչելու ծրագիրն ավելի հեշտ իրագործելի թվաց:

Դեկտեմբերն արդեն վերջանալու վրա յեր, բայց դեռ ձյուն չէր յեկել. անձրևներ էլ չկային: Միայն գիշերներն էյին ցուրտ: Սարխլած նավի ճեղքվածքներից սառը քամին սվվալով ոձի պես ներս էր թափանցում և զուր էյին նրանք սեղմվում իրար. սաստիկ մըրսում էյին:

Գալուն կամաց-կամաց հաշտվեց այդ նոր կենցաղի հետ, ընտելացավ նոր ընկերներին, բայց փախչելու միտքը չթողեց, դա նրա փրկության հույսն էր:

Նրան ստիպում էյին մասնակցել իրենց բոլոր արկածներին, սովորեցնում էյին ինչպես գողանալ, ինչպես ձեռքից-ձեռք անցկացնել գողացածը, յեթե բռնվեր, և այլն...

Հովակիմը նավապետն էր:

Նրա խոսքը որենք էր: Բոլորը լուռ հպատակվում էյին նրան: Վոչ վոք իրավունք չունեք առանց նրա գիտութան մի կողմից ծախսելու: Գողությամբ ձեռք բերված բոլոր իրերը, փողերը յերեկոյան պետք է մեջտեղ գալին: Աստված վոչ անի, յեթե մեկը մեղանչեր ու բռնվեր:

Գաղան էր կտրում, և քանի շատ էր ծեծում, այնքան ավելի յեր կատաղում: Ծեծում էր ձեռներով, կոշիկների կրունկներով հասցնում էր ուր հասնում էր:

յերբ արյուն եր տեսնում ավելի յեր բորբոքվում և կըս-
պաներ, յեթե ընկերներն ուժով յետ չքաշեյին ու աչքից
չհեռացնեյին հանցավորին:

Գալոն մի անգամ եր միայն ականատես յեղել այդ
պատժին, այն հիշելուց անգամ՝ սարսափում եր:

Հովակիմից վոչինչ չեր կարելի ծածկել. բոլորը
լրտեսներ եյին և աչալուրջ հսկում եյին միմյանց:

Գալոյեմիակ մտերիմը նավի վրա Համոն եր, միայն
նրանից եր, վոր չեր վախենում: Նրանք միշտ միասին
եյին լինում և յերբ մենակ եյին մնում, ծրագիրներ և-
յին կազմում իրախչելու:

Համոն միայն յերկու տարով եր մեծ Գալոյից,
բայց շատ ավելի բան տեսած, շատ ավելի փորձված:

— Գալո, բախտներս բանում ե, — չչնջաց նա մի
անգամ Գալոյի ականջին, յերբ մենակ մնացին:

— Ինչ կա՞... Համո, սաս:

— Ես յերկու որս հավաքելու յեն:

— Ի՞նչ են հավաքելու, ո՞վ... Բարձր սաս, լսող
չկա...

— Կամաց-կամաց. նա ամեն տեղ ականջ ունի:
Նորքում մանկատուն են բաց արել: Բոլորին հավաքե-
լու յեն:

— Ինչո՞ւ համար, վախեցած հարցրեց Գալոն գլխի
չընկնելով:

— Տո չաչ, ինչո՞ւ յես վախենում, մեր ուղածն ել
եղ ե ելի: Մանկատներ են բաց անելու, ել փողոցնե-
րում վոչ մի հատ խուժան չը պետք ե մնա, Կառավա-
րությունը փող ե ավել, մարդիկ ե նշանակել եղ դործի
համար: Տաք տեղ կունենանք, կուշտ կլինենք, ուսում
կառնենք, ես վիճակից ել կազատվենք:

Գալոն ձայնն ավելի ցածրացնելով չչնջաց.

— Ճի՞շտ ես ասում:

— Քու արևը:

— Ո՞վ ասաց:

— Հաստատ բան ե: Մի քանի որ առաջ յերեսուն-
հինգ հոգու հավաքել են, պատկերները քաշել, բաղնիք
տարել՝ լողացրել, թամ-թաղա շորեր հագցրել:

— Համո ջան, ինչ լա՛վ կլինի. բա վոր մեզ չվեր-
ցընե՞ն: — Գալոյի դեմքը մթազնեց:

— Տո ախմախ, ինչո՞ւ չպետք ե վերցնեն:

— Կասեն՝ գող եք:

— Բանիդ կաց... Գող եք... Բա ինչ անենք, վոք
գող չլինենք... Քաղցած հո չենք մեռնելու: Սուս արա,
մարդու բան չասես:

Գալոն յեթե չամաչեր Համոյից, ուրախությունից
լաց կլիներ, բայց Համոն միշտ ծիծաղում եր նրա վրա
և չեր սիրում, վոր նա տգգում եր: Այդ բանն ստիպեց
նրան կուլ տալ արցունքները:

Յերեկոյան, յերբ հավաքվեցին նավի բնակիչները,
Գալոն նկատեց, վոր սովորականի պես չեն գոռգոռում,
չեն հայհոյում, չեն պարծենում իրենց քաջագործու-
թյուններով: Լուռ, գլուխները կախ նստել եյին և վոչ-
վոք վոչինչ չեր ասում: Համոն ու Գալոն շունչները ի-
րենց քաշած, վախեցած, հարցական աչքերով սրան
նրան եյին նայում, ինչ-վոր վատ բանի սպասելով:

Հովակիմը ծնկները գրկած, աչքերը մի կեսի հա-
ռած՝ նստել եր: Բերանի ծխախոտը վաղուց հանգել եր,
բայց նա կարծես մոռացել եր, վոր բերանում ծխախոտ
կա:

— Տղերք... Ո՞վ ե ուզում վորբանոց գնալ, — բե-
րանի հանգած ծխախոտը մի կողմ նետելով, դարձավ
նա տղաներին:

— Համը տեսել ենք, — կանչեց վաչագանը:

— Վոր իմանամ քաղցից մեռնելու յեմ ելի չեմ գը-
նա:

— Մեզանից չեն հարցնելու... Այ, ասում են յերեկ
չե անցյալ որը յերեսունհինգ հոգու տարել են: Ել վոչ
մեկին չեն թողնելու փողոցներում:

— Ո՞վ ե ուզում գնալ, — կրկնեց նա ավելի բարձր:

Գալոն ուզեց ձեռք բարձրացնել, բայց Համոն նկա-
տեց ու իսկույն ձեռքը բռնեց:

— Հիմա ի՞նչ անենք... մի բան պետք ե վճռենք:

— Փախչենք:

— Փախչե՛նք... փախչե՛նք... ձայն-ձայնի տվին
բոլորը:

— Ո՞ւր...

— Լենինական:

— Թիֆլիզ:

— Բագու:

— Մեկ է, թեկուզ ջհանդամի ծայրը, բայց վորբա-
նոց չեմ գնալու:

— Գալո՛... Համո՛, դուք վո՞նց:

— Վորտեղ դուք ենտեղ ել մենք:

— Գալոն կմկմաց, իսկ Համոն պատասխանեց.

— Թե չեք ուզում միք գա... մնացեք... վորբանո-
ցում լավ կլինի...

— Վոր լավ լիներ, խի՞ եյինք փախչում:

— Ուրեմն վճռված է, գնում ենք, ով յետ կանգնի՝
բանը փիս կլինի. կատակացնեմ, ճանճի պես կտրո-
րեմ...

— Յերբ ենք ճանապարհ ընկնում:

— Շտապելու բան չկա, մինչև հերթը մեզ հասնի՝
մի քանի որ կբաշի: Փոքրերից են սկսել, շտապելու
բան չկա:

— Գալոյի սիրտն այնպես եր բաբախում, վոր նա
վախենում եր լսող լինի մտքինը և ինքն իրեն մատնի:

Համոն ու Գալոն արդեն վորոչել եյին իրենց անե-
լիքը, յեթե չհաջողվեր մինչև նրանց գնալը ցու-
ցակազրվել, այն ժամանակ պիտի սպասեյին մինչև
մեկնելու օրը և յերկրորդ գանգից հետո, յերբ գնացքը
չարժվեր, ծածուկ փախչեյին թագստատեղերից:

Թվում եր, թե դժվար պետք է լինի հավաքել այդ
4. ԴԵՊԻ ԱՊԱՍՏԱՐԱՆ

հանդուգն, փողոցի կյանքին վարժված տղաներին: վոր
չատ գես ու դեն պիտի ընկնեն, և գուցե կարիք լինի մի-
լիցիայի ոգնության դիմել:

Առավոտվա ժամը յոթից, ուսած յեկեղեցու դի-
մաց, փակ խանութների ծածկի տակ հավաքվել եյին

նրանք: Նրանք, վոր ամառը լսել անգամ չեյին ուզում
վորբանոցի մասին, յեկել, հավաքվել եյին այդտեղ:
Փողոցում հավաքած թղթերից, ծխախոտի և լուցկու
տուփերից խարույկ եյին վառել ու թռչկոտում եյին
խարույկի շուրջը, վոր տաքանան:

Ժամը ութին սկսեցին ցուցակազրել:

— Բա մեզ յե՞րբ պիտի տանեք, — դողդողալով
հարցնում եյին ամեն կողմից:

— Սառա՛նք:

— Մի քանի օրից, յերեխանե՛ր, մի քիչ ել սպասե-
ցեք, դիմացեք, հազուտեղենը դեռ պատրաստ չէ:

Ցուցակազրված յերեխաներին լուսանկարերուց հե-
տո, ուղեցին զույգ-զույգ կանգնեցնել բաղնիք տանելու
համար, բայց այդ վոչ մի կերպ չհաջողվեց: Նրանք գը-
նում եյին խառնիխառն, իրար վոտքի տակ ընկնելով:
Նրանց յետևից գնում եյին նրանք, վոր դեռ պետք է
սպասեյին հերթի:

Աղմուկ, իրարանցում եր...

Անցորդները կանգ եյին առնում և ժպտալով նայում
նրանց յետևից:

— Աղա պալտոն դես դցի, մեկ է, վառելու յեն:

— Բաղդո, կարո, Ստեփան... — ձայն-ձայնի եյին
տվել նրանք:

Մինչև բաղնիք հասնելը, հենց փողոցում՝ սկսեցին
փոխանակել ով մի լավ տաք բան ուներ, հանում եր
ու գլխները վրայից նետում ընկերոջը, վերցնում նրա
չուլը կամ հենց այնպես ել մնում շապկով: կային
այնպիսիները, վոր բոլորովին մերկ մնացին:

Բաղնիքի նախասենյակում նրանք մերկացան. ըզ-
պեսաները դուրս տարան բակը, այրելու համար:

Մի ժամում ինչպե՛ս պետք է մաքրվեր այդ ամիս-
ների, գուցե և տարիների կեղտը: Թվում եր, թե կա-
րիք կա մի քանի օր թրջոց գնել այդ մանուկներին,
այնպես եր կեղտը ծծվել նրանց մաշկի մեջ:

Գլուխները խուղելուց, լողացնելուց, մաքրվելուց

հետո, վոտից գլուխ նորոգված, նրանք բոլորովին ուրիշ մարդ դարձան և դժվար եր ճանաչել մի ժամ առաջ փողոցում վազվզող խուժանին:

Նրանց զույգ-զույգ կանգնեցրին և տարան դեպի Նորք:

Նավի բնակիչներն իջան նավից, վերջին անգամ հրաժեշտ տվին նավին և գնացին դեպի կայարան:

Համոն ու Գալոն մտազբաղ հետևում ելին նրանց: Յերբ մի քիչ հեռացան, յետ նայեցին և տեսան շանը, վորը վոչ մի վատ բան չենթադրելով, նավի վրայից ուրախ-ուրախ հաջում եր:

— Եհե՛... Բա շո՞ւնը:

— Հա, շունը մնաց:

— Գնամ—բերեմ:

— Պետք չէ:

— Բա մնա՞:

— Ճարն ի՞նչ:

— Խե՛ղճ Ջամալ:

Նրանք մի քիչ տեղ լուռ գնացին: Շան հաջոցը չէր կտրվում: Նա կարծես սկսեց հասկանալ. զգաց, վոր դատվորական, ամեն որվա գնալը չէ, վոր ել չեն վերագառնալու, միս, վոսկոր չեն բերելու: Նա կարծես հասկացել եր, վոր թողնում են իրեն բախտի բերմունքին ու վողբաձայն կաղկանձում եր, դես ու դեն ընկնում, չանգոտտում տախտակամածի յեզրերը և հաղիվ եր իրեն պահում նավի վրա:

Տղաները շուտ-շուտ յետ ելին նայում, տխուր դիտում նավը, շանը, վոր թողին մենակ, անտեր...

— Կացե՛ք աղերք, մեղք ե, յեկեք նրան ել տանենք:

— Գժվե՞լ ես, ի՞նչ ե, քեզ շատ տեղ հասցրիր, մնաց շանը:

— Բա նապես, թողնենք...

Առանց սպասելու, թե ինչ կասեն ընկերները, նորմատը դրեց բերանին ու շվվացրեց:

Շունը շվվոցը լսելով, մի րոպե դադարեց հաջե-

լուց, լարեց լսելիքը և յերբ շվվոցը կրկնվեց, նա իրենցած նետեց նավից ու ընկավ փափուկ հողի վրա. անմիջապես վեր կացավ, ցնցվեց ամբողջ մարմնով, թափ տվեց վրայի փոշին ու սլացավ:

Լեզուն կախ, հեվիհեվ նա հասավ խմբին. ուրախությունից կաղկանձելով՝ սրա-նրա վոտի տակն ընկավ, ցատկեց նրանց ուսերին, լիզեց յուրաքանչյուրի վիզը, այտը և խելագարի պես սկսեց յետ ու առաջ վազվզել:

Առաջին զանգից հետո, բոլորը թագնվեցին, վոմանք բարձրացան տանիքի վրա, մի քանիսին հաջողվեց վազոն մտնել:

Գալոն ու Համոն սրտատրոփ սպասում ելին գնացքի շարժվելուն:

Շունը կորցնելով նրանց՝ լուռ դես ու դեն եր վազվզում, վոտների տակ ընկնում, քացիներ ուտում, ուզում եր վազոն ցատկել, վոտով ելին խփում, վազում եր մի ուրիշ վազոն, այնտեղ ել նույն անհաջողությունն եր հանդիպում:

Գլուխը կորցրած չգիտեր վորտեղ փնտռել, վո՞տեղ գտնել իր տերերին:


Նրանք ձայներն իրենց քաշած՝ կծկվել ելին թագըստատեղերում:

Լավեց յերկրորդ զանգը, որերի սուլիչի ձայնը, վորին պատասխանեց շոգեմեքենան: Վազոնները ցնցվեցին, աղմուկով կպան իրար ու գնացքը շարժվեց:

Շունը վազում եր գնացքի մոտից: Շուտով շունը յետ մնաց, գնացքն առաջ անցավ և աստիճանաբար արագացրեց ընթացքը:

Տեսնելով, վոր անկարող և հասնել, նա մի վայրկյան կանգ առավ ու կրկին գժի պես սկսեց վազել, այնքան վազեց, մինչև գնացքը ծածկվեց նրա աչքերից:

Մի քիչ տեղ ել վազեց ու գլխի վրա փուլեց, յետևի վոտները դեմ տվեց գերանին ու ճիգ գործ դնելով՝ կրկին կանգնեց առաջին վոտների վրա: Բարձրացրեց դունչն ու յերկարատև դառնորեն վոռնաց:



Գալուն ու Համոն կանգնած ելին կայարանի առջև։
Նրանք նայում ելին գնացքի յետևից, մինչև այն ծած-
կրվեց։ Լավեց վերջին անգամ շողեմեքենայի սուլոցը,
և միայն այդ Ժամանակ նայեցին իրար, բռնեցին իրար
ձեռք և վռչինչ չկարողացան ասել։ Կարծես յերա՛գ լի-
նեք։

Նրանց ծրագիրն իրագործված էր. ազա՛տ ելին։

— Գալո՞ւ։

— Հը՞։

— Գնացի՞ն։

— Գնացի՛ն, — արձագանքի պես կրկնեց Գալուն և
ուրախությունից չկարողացավ զսպել արցունքները։

Այդ րոպեյին վոտները թույլ-թույլ քարշ տալով,
նրանց մոտից անցնում էր շունը։

— Ջամա՞լ...

Շունը ծանոթ ձայն լսելով, կանգ առավ, մեկամաղ-
ձոտ, պղտոր աչքերը դես ու դեն դարձրեց և նկատելով
Համոյին, կարծես չհավատալով աչքերին՝ մոտ յեկավ.
Լիզեց նրա ձեռքը։

— Խե՛ղճ Ջամալ։

Շունը կարծես հասկանալով նրան, մի խղճալի
հայացք ձգեց Համոյի վրա ու լուռ նստեց նրա վոտնե-
րի մոտ։

Գալուն շոյեց նրա գլուխը և մի կաթիլ արցունք ըն-
կավ շան գլխին։

Ուրախ ելին, ու վոչ մեկը խոսք չէր գտնում ասե-
լու։ Կարծես վախենում ելին ուրախանալ, վախենում
ելին դարթնել այդ ծանր քնից։

Շունը յետևներից զցած, նրանք առանց շտապելու
գլխեցին դեպի նավ։


Մի քանի օր անց, Համոն ու Գալուն ապաստարան
տարվող խմբի հետ, յերգելով Նորքի մանկատունը դը-
նացին։

314

Պատ. խմբագիր՝ Արաֆս
Տեխ. խմբագիր՝ Ան. Գապարյան
Սրբազրէշ՝ Մ. Խոսիտրուհի



Գլավիտի լիազոր՝ Վ—2026. Հրատ. 4263.
Պատվեր 212. Տիրաժ 3500.
Թուղթ 62X94. Տպագր. 3 մամ.
Մեկ մամ. 24.480 նշան.
Հանձնված և տպագրության 2 մարտի 1939 թ.
Ստորագրված և տպագրության համար 23 մայիսի 1939 թ.



« Ազգային գրադարան



NL0401638

4 0 50 4

11070